

ՌԻԳԱՅԻ 1921 Թ. ՀՅԳ-ՌԿ(Բ)Կ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդային գաղտնի փաստաթղթերում*

Հայաստանի առաջին Հանրապետության անկմանը հետևած՝ ՀՅԳ-ի պատմության հետաքրքրական էջերից մեկը Ռիգայում 1921 թ. հուլիսի 7-14-ին Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՌԿ(Բ)Կ-ի) հետ տեղի ունեցած բանակցություններն են: Դրանք ուշագրավ էին այն առումով, որ նոր իշխանությունները, ի դեմս բոլշևիկների, հարկադրված էին դիմել մարտավարական փոխզիջման՝ քաղաքական շփումներ նախաձեռնելով Հայաստանի տարածքի մեծ մասում իրենց իսկ կողմից իշխանագուրկ արված հակառակորդի հետ:

Ռիգայի բանակցությունների նախաձեռնողը ՀՅԳ Արտասահմանի Պատասխանատու մարմինն էր, որն այդ նպատակով ստեղծեց հատուկ պատվիրակություն հետևյալ կազմով՝ Վահան Փափազյան (Կոմս), Արշակ Ջամայան (Իսահակյան), Վահան Նավասարդյան: Արդեն 1921 թ. մայիսի 26-ին Վ. Փափազյանը դիմեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմին՝ փոխհարաբերությունների կարգավորման և հայոց քաղաքական ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ բանակցելու առաջարկով: ՀՅԳ պատվիրակների նպատակը հստակ էր՝ Լեռնահայաստանի պայքարին տալ խաղաղ լուծում, Չանգեզուրն ու Ղարաբաղն ընդգրկել Խորհրդային Հայաստանի կազմում, որի գլխավոր հաղթաթուղթը Գ. Նժդեհի գլխավորությամբ շարունակվող Չանգեզուրի հերոսամարտն էր:

Արդեն Վ. Փափազյանի դիմումից երկու շաբաթ անց ՌԿ(Բ)Կ-ի ղեկավարությունը համաձայնեց բանակցել ՀՅԳ ներկայացուցիչների հետ: Խորհրդային կողմից բանակցողներ նշանակվեցին հայտնի դիվանագետ Ա. Իոֆֆեն և երկու հայազգի կոմունիստներ՝ Ս. Տեր-Գաբրիելյանը և Վ. Տեր-Վահանյանը: Ուշագրավ է, որ բոլշևիկները ՀՅԳ-ի հետ բանակցությունների գնացին՝ հաշվի առնելով հենց Չանգեզուրի շարունակվող դիմադրությունը: Ի դեպ, ոչ պակաս կարևոր էր համարվում ՀՅԳ-ի կողմից արտասահմանում խորհրդային ներկայացուցիչների նկատմամբ ահաբեկչության կատարման հնարավորության հանդեպ ունեցած վախը: Բայց եթե վերադասը՝ ՌԿ(Բ)Կ Կենտկոմը, հանգամանքների բերումով կողմ արտահայտվեց բանակցություններին, ապա Երևանում նրա ներկայացուցիչները՝ հայ բոլշևիկները, կտրուկ դեմ էին, բայց միաժամանակ՝ անգոր, քանի որ Մոսկվան արդեն իր վճիռը կայացրել էր, ուստի նրանց մնում էր միայն լուռ համակերպվել:

Բեռլին մեկնելով որպես ՀՀ Պատվիրակության անդամ՝ Վ. Փափազյանը ՀՅԳ

* Ընդունվել է տպագրության 28. 02. 2012:

Գ (Ժ) քաղթ, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012
վեմ համահայկական հանդես

Պատասխանատու մարմնի հանձնարարությամբ և այդ մարմնի հրահանգներով պետք է զբաղվեր բոլշևիկների հետ հարաբերությունների կարգավորմամբ. «Կապ հաստատել բոլշևիկներու հետ եւ եթէ հնար է, բանակցութեան մտնել՝ երկրին մէջ իրենց եւ Գաշնակցութեան գործակցութեան նկատմամբ»¹: Ի դեպ, Բեռլինում ՀՀ դեսպան Գրինֆիլդը, ում կարծիքը Վ. Փափազյանը համարել է «կշիռ ունեցող», նրան հետևյալ խորհուրդն էր տվել. «Ամենամեծ զիջումներու գինով, պետք է համաձայնութեան գալ մեծամասնականներու հետ՝ փրկելու համար մեր ժողովուրդի գոյութիւնը: Անոնց ռեժիմը անցողական է, ուրեմն առիթէն պէտք է օգտուիլ ներկայիս»²:

ՀՅԳ արտասահմանյան կառույցները խնդիր էին դրել ըստ ամենայնի աջակցել տարագիր հայությանը հայրենիք վերադարձնելու գործին: Ժամանակի պայմաններից ելնելով՝ այս խնդրի լուծման հնարավոր տարբերակներից էր համարվում նրանց տեղավորումը Խորհրդային Հայաստանում: Մասնավորապես, Վ. Փափազյանը ՀՅԳ Արտասահմանի Պատասխանատու մարմնից և ՀՀ Պատվիրակությունից հրահանգներ էր ստացել դիմումներ կատարել «Պերլինում գտնուող սովետական ներկայացուցիչներուն որպէս զի իրաւունք ձեռք բերեն բանալու անոնց առջեւ Հայաստանի սահմանը, փրկելու հայ այդ զանգուածը անխուսափելի ոչնչացումէ»³: Ուստի Լոնդոնում ՀՀ դեսպան Հ. Բագրատունին որպես խորհրդային դեսպան Բեռլին մեկնող Լ. Կրասիին հետ 1921 թ. ապրիլի 20(22)-ի տեսակցության ժամանակ պահանջել էր. «1. Հեռացնել կարմիր բանակը Հայաստանէն, 2. Բանակցութիւն սկսիւն Հայաստանի կառավարութեան հետ համաձայնութեան եզր մը գտնելու համակեցութեան»⁴: Այս ամենին Կրասիին խուսանավող պատասխան էր տվել. «Անկեղծօրէն պէտք է ըսեմ թէ Հայաստանը համայնավարացնելով կամ նուաճելով ոչ մէկ շահ չունինք: Այլ է Ազրայէճանի պարագան, որ շատ կարեւոր է մեզի համար»⁵: Կրասիին հետ տեսակցել էր նաև Վ. Փափազյանը և հանգամանալից կերպով ներկայացրել ՀՅԳ տեսակետները մանավանդ Խորհրդային Հայաստանի տարածքային ընդլայնման առումով⁶:

Ընդհանրապես, ՀՅԳ-ն բոլշևիկների հետ հայության քաղաքական ճակատագրին վերաբերող հարցերի շուրջ քննարկումներին համալիր կերպով էր մոտենում: Օրինակ՝ ՀՀ Պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանը Փարիզում տեսակցել էր Խորհրդային Հայաստանի պատասխանատու գործիչներ Ա. Երզնկյանի և Ս. Փիրումյանի հետ (վերջիններս անհնար էին համարել ՀՅԳ-ի հետ գործակցությունը), հանդիպումներ էին եղել Պրահայում խորհրդային դիվանագետ Լ. Կարախանի, Վարչավայում և Ռ-նելում՝ Ստարկի, Կ. Պոլտում՝ Ա. Կարինյանի ու Գ. Շահվերդյանի հետ⁷:

Ի վերջո, այս երկար-բարակ հանդիպումներից հետո, որոնք սովորաբար ավարտվում էին անարդյունք, Ռ-իգայում սկսվեցին բանակցություններ, որոնց վարման համար Վ. Փափազյանը ՀՀ Պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանից և Թավրիզում գտնվող ՀՀ կառավարությունից համապատասխան

1 Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, Պէյրուք, 1957, էջ 191:

2 Նույն տեղում, էջ 192:

3 Նույն տեղում, էջ 198:

4 Նույն տեղում, էջ 199:

5 Նույն տեղում, էջ 200:

6 Նույն տեղում, էջ 201:

7 Նույն տեղում, էջ 203-204:

հրահանգներ խնդրեց: Այդ առթիվ նա հետևյալ հարցումն արեց. «Ա. Ընդունինք համայնավարներու մասնակցութիւնը մեր կառավարութեան, Բ. Եթէ անոնք համաձայնին եւ ապահովեն Վասպուրականի եւ Տարօնի կցումը Հայաստանին, ինչպիսի աջակցութեան եւ ինչ սահմաններու մէջ զիջումներ պիտի ընենք անոնց: Հասկանալի է, որ նախ քան վերջնական եզրակացութիւն, որեւէ արդիւնք պիտի ենթարկենք ձեր վաւերացումին»⁸:

Ակնհայտորեն, բանակցությունների նախօրեին ՀՅԳ-ի դիրքերն ավելի ամուր էին, և նրա պատվիրակները գնում էին «ինքնավստահ եւ լուստես»: Իսկ դրա պատճառը պարզ էր. «Մեր կառավարութիւնը միայն իր կեդրոնը փոխադրած էր. նա կար ու կը մնար նախ Չանգեզուրի Գորիս ասանի մէջ, ապա Թարիզ: Չանգեզուրը պատրաստուած էր ինքնապաշտպանութեան, կռիւները սկսած էին եւ կը շարունակուէին կատաղի կերպով, կռուողներու բանակցութիւնները սովետական ուժերու հետ անհետեւանք մնացած էին: ...Չանգեզուրի դիմադրութեան տեսողութիւնը շատ պիտի դիւրացնէր մեր առաքելութեան յաջողութիւնը»⁹:

Սակայն բանակցությունների եզրափակիչ փուլում՝ հենց նույն Չանգեզուրի աննկուն պայքարի տեղատվության արդյունքում, իրավիճակն արմատապես փոխվեց. «Ռուսական կոմունիստական Կ. Կոմիտէն այլ եւս շահ չունէր հաշուի առնելու մեզ եւ յարգելու իր յանձնառութիւնները»¹⁰: Ի դեպ, նախաստորագրված համաձայնագրի՝ Ռուսաստանի Կոմկուսի վերնախավի կողմից չհաստատվելու այլևայլ պատճառների մեջ ուշագրավ էր նաև նույն Իոֆֆեի նկատառումը. «Բազուի հայ կոմունիստները արգելք եղած են համաձայնագրի վաւերացման»¹¹:

Այսինքն՝ բացառապես Չանգեզուրի պայքարի շնորհիվ բոլշևիկյան վերադասը, անտեսելով Խորհրդային Հայաստանի ղեկավարության բողոքները, ստիպված համաձայնեց բանակցել ՀՅԳ- Արտասահմանի Պատասխանատու մարմնի ներկայացուցիչների հետ: Բայց արդեն Նժդեհի՝ Արաքսն անցնելուց հետո բոլշևիկները դադարեցրին ՀՅԳ-ի հետ տարվող բանակցությունները: Քանզի ինչպես ժամանակին Հ. Քյուրքչյանն է դիպուկ կերպով նկատել. «Ռիզայի բանագնացները կկորցնեն կարևոր այդ գեները, որու համար գլխատրաբար խորհուրդները պիտի բանակցին ՀՅԳ- հետ»¹²:

Փաստորեն՝ ՀՅԳ-ն, ի դեմս Վ. Փափազյանի գլխավորած պատվիրակության, հետևողականություն դրսևորեց, բացահայտելով մի կողմից՝ ազգային շահերի հետապնդման գործում իր հաստատակամությունը և մյուս կողմից՝ այդ նպատակով գաղափարական հակառակորդի հետ փոխզիջման գնալու պատրաստակամությունը: Բոլշևիկներն էլ հերթական անգամ ցույց տվեցին, թե ինչպես են «տեր կանգնում» իրենց խոսքին և ստորագրած պարտավորություններին: Դա իրենց խնդիրն էր, բայց կարևորն այն է, որ գոնե Չանգեզուրը մնաց Հայոց պետականության կազմում:

Ամփոփելով՝ անհրաժեշտ ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել մի կարևոր հանգամանքի վրա: Տպագրության ներկայացված փաստաթղթերից ակնհայտ երևում է բոլշևիկյան կուսակցության և խորհրդային դիվանագիտության ղեկավարության անթաքույց և ընդգծված հակահայ դիրքորոշումը: Այս

8 Նույն տեղում, էջ 207-208:

9 Նույն տեղում, էջեր 211, 213:

10 Նույն տեղում, էջ 225:

11 Նույն տեղում, էջ 228:

12 **Քիւրքչեան Յ.**, Ուրուագիծ ԳՅԳ պատմութեան 1919-1924 հնգամեակ, Աթնք, 1988, էջ 63:

հանգամանքն առաջին հերթին վերաբերում է Վ. Լենինին և Գ. Չիչերինին, որոնց առնչությամբ խորհրդահայ պատմագրության կողմից 70 երկար ու ձիգ տարիների ընթացքում փորձ է արվել ստեղծել «հայասերների» դիմակներ: Ներկա հրապարակումը վերջնականապես հօդս է ցնդեցնում այդ առասպելը:

Հրապարակվող փաստաթղթերը խորհրդային շրջանում կրել են «Գաղտնի» նշագրում: Հաշվի առնելով դրանց հույժ գաղտնիությունը՝ խորհրդային իշխանության օրոք բնագրերը պահպանվել են Խորհրդային Միության կոմկուսի կենտրոնի Ընդհանուր բաժնի Գաղտնի արխիվում, «Գործ N. 44-Ա5/7a: Գործ «Հայկական ԽՍՀ–դաշնակների մասին, 1921-1949 թթ.» անունը ստացած քրթապանակում: Այժմ այս փաստաթղթերի բնագրերը պահպանվում են Ռուսաստանի Դաշնության Նախագահի արխիվում: Այս խիստ արժեքավոր վավերագրերի միկրոժապավենները և լուսապատճենները ժամանակին տեղափոխվել են Երևան և այժմ գտնվում են Հայաստանի Ազգային արխիվում՝ ՀՅԳ-ի ֆոնդում (N 1457): Փաստաթղթերը տպագրվում են լուսապատճեններից՝ միկրոժապավենների հետ համեմատության հիման վրա, բնագրային նույնության պահպանմամբ, ժամանակագրական դասավորությամբ: Հստակ ժամկետ չունեցող փաստաթղթերը տեղադրված են վերջում: Հավելվածների համարակալումների կրկնությունները բնագրից են: Անհրաժեշտության դեպքում կատարվել են միայն ուղղագրական շտկումներ:

Ռիգայի բանակցությունների պատմության աղբյուրագիտական հենքը ամբողջականացնելու նպատակով մեծաթիվ անտիպ վավերագրերի հետ միասին, առաջին անգամ հայերեն թարգմանությամբ հրապարակում ենք նաև մի քանի արժեքավոր փաստաթղթեր՝ 2003 թ. Յու. Բարսեղովի տպագրած ռուսերեն ժողովածուից¹³:

Հուտով ենք, որ ներկա հրապարակումը կնպաստի ՀՅԳ պատմության առավել համակողմանի հետազոտմանը¹⁴:

Ավագ Ա. Հարությունյան
Պարս. գիյո. քեկնածու

THE 1921 ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION (DASHNAKTSUTYUN) – RUSSIAN COMMUNIST (bolshevik) PARTY NEGOTIATIONS IN RIGA

Secret Soviet Documents

Avag A. Harutyunyan

13 Ст'я Генотид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества. Документы и комментарий. Ред. и сост. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003.

14 Ռիգայի բանակցությունների վերաբերյալ ասպարեզում առկա ուսումնասիրություններից տե՛ս Քիրոբջեան Յ., Ուրուագիծ ՀՅԳ պատմութեան 1919-1924 հնգամեակ, Աթենք, 1988: Տասնապետեան Հր., Գ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ ժ. Ընդհանուր ժողով (1890-1924), Աթենք, 1988: Simonian Hr., The Last Try: The Dashnak-Bolshevik Talks in Riga, 1921, "Armenian Review", 1991, vol. 44, N. 2, pp. 53-70. Խորշուղյան Լ., Հայկական հարցը, Ե., 1995: Գ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, կազմ. և խմբ. Վլ. Ղազախեցյան, Եր., 2001: Մանուկյան Գ., 1921թ. Ռիգայի բանակցությունները եւ Չանգեզուրի հիմնահարցը.- «Գարեգին Նժդեհ»-115: Գիտաժողովների նյութեր», Եր., 2001, էջ 39-47: Հակոբյան Ա., ՀՅԳ-ՌԿ(Բ)Կ Ռիգայի 1921թ. բանակցությունների հարցի շուրջ, «Դրօշակ», Եր., 2010, N. 3, էջ 31-37:

ԹԻՎ 1
Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Վ. ՄՈՒՍՏՈՎԻՆ¹⁵

1921թ. հունիսի 1

Ընկեր Մոլոտովին¹⁶,
Հարգելի ընկեր,

Ուղարկում եմ Ձեզ Ռ-Կ(բ)Կ Կենտկոմին «Դաշնակցության» Գերագույն Մարմնի պատվիրակության Բեռլինից հղած ուղերձը: Եթե հարցը վերաբերում է կառավարական դաշինքի¹⁷ մեջ մտնելուն, դա, իհարկե, քննարկման արժանի կլիներ, եթե միայն հայկական խորհրդային կառավարության ներքին քայքայման փորձերի դուռը չբացեր:

Կոմունիստական ողջույնով՝
Գ. Չիչերին¹⁸ [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 6: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2
Վ. ՓԱՓԱՉՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ռ-Կ(բ)Կ
ԿԵՆՏԿՈՄԻՆ¹⁹

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին

Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» Կուսակցության Գերագույն Մարմնի որոշմամբ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի հետ ինչպես երկու կուսակցությունների փոխհարաբերությունների կարգավորման, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող զուտ քաղաքական հարցերի շուրջ բանակցություններ վարելու համար երեք հոգուց բաղկացած հատուկ պատվիրակություն է ընտրված:

Կուսակցության որոշումն անմիջապես բխում է սույն թվի ապրիլին և մայիսին Բուխարեստում գումարված կուսակցության կոնֆերանսում²⁰ ընդունված բանաձևերից և առնչվում է վերը շոշափված հարցերին:

Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի, ինչպես նաև Հայաստանում նույն կուսակցության ներկայացուցիչների հետ ընդհանուր լեզու գտնելու Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» Կուսակցության ցանկությունը հրամայաբար թելադրված է Հայաստանի փաստացի դրությամբ:

Ինչպես հայտնի է, Հայաստանի վրա Քեմալ փաշայի արշավանքից և թուրքական զորքերի կողմից Կարս և Ալեքսանդրապոլ քաղաքների նվաճումից հետո, Հայաստանում ՌՍՖՆՀ ներկայացուցիչ ընկ. Լեզրանը²¹ Հայաստանի այն ժամանակվա կառավարության

15 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «Ք[աղ]Բ[յուրոյի] արձանագր. N. 38, կետ 6», 2. «Գործ N. 11, դաշնակներ, 17/0, 17/21»: Վերին ձախ անկյունում կա նշում. «Տեր-Գաբրիելյանին: Շտապ կարծիքի համար: Մոլոտով: 3.VI»:

16 Մոլոտով Վյաչեսլավ Միխայիլի (1890-1986) – ԽՍՀՄ վարչապետ (1930-1941), արտգործոժողկոմ (1939-1949, 1953-1956), ԽՍՀՄ Կենտկոմի Զարթուրոյի անդամ (1921-1957), ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար (1921-1930), իսկ 1921-1922 թթ. պատասխանատու քարտուղար: 1957թ. հեռացվել է Կոմկոսից:

17 Այսուհետ դաշինք բառը հասկանալ կոալիցիայի իմաստով:

18 Չիչերին Գեորգի Վասիլիի (1872-1936) – ՌՍՖՆՀ և ԽՍՀՄ արտգործոժողկոմ (1918-1930): Կնքել է Բրեստի հաշտությունը, պայմանագրեր Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի հետ: Հայտնի էր իր արվամուլությամբ և հոգեկան խանգարմամբ:

19 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԲԲ N. 38 արձանագր., կետ 6», 2. «Գործ N. 11 դաշնակներ, 17/0, 17/21»:

20 Բուխարեստի խորհրդաժողովում քննարկվել են ՀՀԳ 9-րդ Ընդհանուր ժողովից հետո տեղի ունեցած իրադարձությունները, անբավարար աշխատանքի համար քննադատվել են Երկրի մարմինները: Խորհրդաժողովում որոշվել է «Երկրեն դուրս կապի մեջ մտնել Սովետ. Ռուսաստանի հետ, նպատակ ունենալով օգտագործել անոր քաղաքական կշիռը»: Ստեղծվել է Արտասահմանի Պատասխանատու Մարմին, որին անդամակցում էին Բյուրոյի անդամներ Ա. Ջամալյանը, Ա. Գյուլխանդանյանը, Ս. Արարտյանը, փոխանդամներ Գ. Ղազարյանը, Վ. Նավասարդյանը, ինչպես նաև՝ Շահան Նաթալին, Հ. Ամատունին, Դ. Դավիթյանյանը: Փաստորեն, այս մարմինը մինչև 1923 թ. ապրիլ-մայիսի Վիեննայի խորհրդաժողովը հանդիսացել է ՀՀԳ Գերագույն Մարմինը: Տե՛ս Տասնապետեան Հր., Հ. 3. Դաշնակցութեան կազմակերպչական կառույցի հղվվույթը, Պէյրուք, 1985, էջ 123-127: Տե՛ս նաև Համո Ա. Սուքիասյան, ՀՀԳ Բուխարեստի խորհրդաժողովի որոշումները..., «Վե՛մ», 2010, N 4, էջ 205-212:

21 Լեզրան Բորիս Վասիլիի (1884-1936) – 1920թ. հունիսից եղել է ՌՍՖՆՀ ներկայացուցիչ ՀՀ-ում, ապա ՀԽՍՀ-ում: 1920թ. օգոստոսի 10-ին Ա. Ջամալյանի հետ կնքել էր համաձայնագիր:

նը²² հայտարարեց քաղաքական նպատակներով Հայաստանը խորհրդայնացնելու՝ ՌԿ(ք)Կ Կենտկոմի որոշման մասին և առաջարկեց իշխանությունը կամավոր ու անհապաղ կերպով զիջել Հայաստանի Հեղկոմի նոր կառավարությանը:

Հայաստանում ՌՍՖՖՀ ներկայացուցիչ ընկ. Լեգրանի և ընկ. Վրացյանի²³ կառավարության միջև կնքված²⁴ ձեզ հայտնի պայմաններով իշխանությունը դեկտեմբերի 2-ին կամավոր զիջվեց Հայաստանի Հեղկոմին²⁵:

Սակայն, ցավոք սրտի, ընկ. Լեգրանի հետ համատեղ մշակված պայմանները չպահպանվեցին: Կնքված համաձայնագրին հակառակ, Կարսի մարզի բռնազավթված մասերը և ք. Ալեքսանդրապոլը թուրքական զորքերից չազատագրվեցին, արտաքին գործերի գծով Հայաստանի Հեղկոմի անդամ ընկ. Բեկզադյանի²⁶ վկայությամբ՝ թուրքերը խաղաղ հայ բնակչության նկատմամբ իրենց գազանություններն անպատիժ շարունակեցին, իսկ խորհրդային իշխանությունների կողմից ամենից կարճ ժամկետում երկրում հաստատվեց դաժանագույն վարչակարգ՝ զանգվածային աքտորներ Ռուսաստանի խորքերը, համատարած պարենային խուզարկություններ, բռնագրավումներ և ձերբակալություններ: Այդ ամենը ժողովրդական զանգվածներին համբերությունից հանեց, ինչի հետևանքը եղավ երկրում ժողովրդական ապստամբությունը²⁷ և «Հայրենիքի Փրկության Կոմիտեի» նոր իշխանության հաստատումը, և վերջապես, Երևան մայրաքաղաքով Հայաստանի [որոշ] մասերի ռուսական խորհրդային զորքերի կողմից երկրորդ անգամ

նվաճումը:

Սակայն այժմ էլ հայ ժողովրդի աշխատավոր զանգվածները, խորհրդային իշխանության բռնաճնշումներից ահաբեկված, իրենց դիրքերը կամավոր չեն ուզում զիջել, նրանք նորանոր զոհողությունների գնով պաշտպանում են իրենց անկախությունը Հայաստանի հսկայական տարածության վրա՝ Ջանգեզուրում և Ղարաբաղում, նրանք դժգոհ են նաև Ջանգեզուրի մասին նոր որոշումից, որն այժմ գտնվում է Հայաստանի Հեղկոմի իշխանության ներքո:

Այնինչ, մեզ թվում է, որ բարի կամքի առկայության և հետագա արյունահեղությունից խուսափելու համար, ինչը հավասարապես վտանգավոր է ինչպես հենց Ռուսաստանի, այնպես էլ վերջապես տնտեսապես քայքայված հայ ժողովրդի աշխատավոր զանգվածների շահերի համար, աշխատավոր հայ ժողովրդի և նրա շահերի ու ձգտումների արտահայտիչ Հայ Յեղափոխական «Բաշնակցություն» Կուսակցության հետ ընդհանուր լեզու գտնելը դժվարին գործ չէ, այլ ընդհակառակը՝ այն հրամայաբար թելադրվում է հենց առկա դրությամբ, երկրում փաստացի վիճակով, Ռուսաստանի և Հայաստանի շահերով:

Ելնելով վերոշարադրյալից, մենք համառորեն առաջարկում ենք Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին՝ որպես երկրում իշխող կուսակցության գերագույն մարմնի, լիազորներ նշանակել և նշել մեզ հետ հանդիպման վայրը և ժամանակը՝ Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության ու Հայ Յեղափոխական «Բաշ-

22 Խոսքը Ս. Վրացյանի կառավարության մասին է:

23 Վրացյան Սիմոն (1882-1969) – անվանի քաղաքական գործիչ, գրող, հրապարակախոս: Հայաստանի առաջին Հանրապետության վերջին վարչապետը, Հայրենիքի Փրկության Կոմիտեի նախագահը: Հուլիերի և բազմաթիվ գրքերի հեղինակ:

24 Խոսքը 1920թ. դեկտեմբերի 2-ին ՌՍՖՖՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի և ՀՀ կառավարության լիազորներ Դրոյի ու Հ. Տերտերյանի միջև կնքված համաձայնագրի մասին է, ըստ որի Հայաստանում իշխանությունը հանձնվում էր Ռազմա-հեղափոխական կոմիտեին:

25 Հեղկոմի կազմը հետևյալն էր Ս. Կասյան (նախագահ), Ա. Նուրիջանյան, Ա. Բեկզադյան, Ի. Դովլաթյան, Ա. Մռավյան, Ս. Տեր-Պարբիեյան (անդամներ):

26 Բեկզադյան Ալեքսանդր Հարությունի (1879-1938) – ՀԽՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսար: Բողոքի նոտաներ է հղել քեմալական կառավարությանը թուրքական զորքերի գազանությունների առթիվ, որոնք մնացել են անարդյունք: Անդրկովկասի ժողկոմխորհի փոխնախագահ (1926-1930), ԽՍՀՄ դեսպան Նորվեգիայում (1930-1934), Հունգարիայում (1934-1937): Գնդակահարվել է: Եղբայրը՝ Տիգրան Բեկզադյանը, եղել է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում ու Բաքվում:

27 Նկատի ունի 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

նակցություն» Կուսակցության միջև հայտնի *modus Vivendi*²⁸ մշակելու, նրանց փոխհարաբերությունների կարգավորման ու համատեղ գործունեության համակարգման նպատակով:

Մենք խիստ ցանկալի ենք համարում, որպեսզի այդ բանակցություններին մասնակցեն նաև Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները:

Մեր առաջարկությունը համարելով հետաձգման համար հույժ անհանդուրժելի, մենք խնդրում ենք Ձեզ չուշացնել պատասխանը և Ձեր որոշման մասին Բեռլինում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչի միջոցով տեղեկացնել մեզ:

Ավելորդ չենք համարում հավելել, որ մեր կուսակցության Գերագույն Մարմնի հետ անմիջական ու մշտական կապի մեջ գտնվելու անհրաժեշտությունից ելնելով, մեր հանդիպումը Ձեր ընտրությամբ կարող է որևէ չեզոք երկրում տեղի ունենալ:

Անկեղծ հարգանքով՝
Պատվիրակության անունից
Վ. Փափազյան²⁹ [ստորագրություն]

26 մայիսի 1921թ.
Բեռլին
Մեր հասցեն՝
Dr. Y. Greenfield³⁰,
Berlin N 15
Kurfurstendamm 175

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 7-10:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 3
Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻՆ³¹

Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության Կենտրոնական Կոմիտեին

Հարգելի ընկերներ,
«Դաշնակցություն» կուսակցության Գերագույն Մարմնի ուղերձի մասին Ձեր հարցման առթիվ ես պատասխանատու ընկերներով խորհրդակցություն էի հրավիրել և հարցի համակողմանի քննարկումից հետո կարծում ենք, որ բանակցությունների մասին առաջարկությունը հարկավոր է հետևյալ նկատառումներից ելնելով ընդունել.

1. Հայաստանի մարզերից մեկը՝ Չանգեզուրը, մինչ օրս զբաղված է ապստամբած դաշնակներով³²: Այդ ապստամբության խաղաղ կարգավորումը խիստ ցանկալի է, քանի որ բանակցությունները զանգեզուրյան աշխատավոր գյուղացիական զանգվածների վրա հավանաբար համապատասխան ազդեցություն կունենան, անգամ եթե դրանք ոչ մի բանի չհանգեցնեն,

2. Իմ ունեցած տեղեկություններով դաշնակները՝ մի կողմից Քենալ փաշայի և մյուս կողմից՝ Անտանտի³³ հետ, եռանդուն բանակցություններ են վարում, և դաշնակների հետ բանակցությունները հավանաբար մեզ հնարավորություն կտան ընդհանուր առմամբ բացահայտել այդ բանակցությունների [Քենալի ու Անտանտի հետ] բնույթը, և ՌՍՖՍՀ ու մասնավորապես Անդրկովկասի դեմ մախապատրաստվող ինտրիգները,

28 *Modus Vivendi* – կենսակերպ, գոյածև (լատիներեն): Դիվանագիտական եզր ժամանակավոր կամ նախնական համաձայնությունները մատնանշելու համար, որոնք հետագայում ենթադրվում է փոխարինել այլ, մշտական բնույթի փաստաթղթով: *Modus Vivendi* հաստատող փաստաթուղթը կարող է իրենից ներկայացնել սովորական համաձայնություն երկու կողմերի ստորագրությամբ:

29 Կոմս (Վահան Փափազյան) (1876, Թավրիզ-1973, Բեյրութ) – հայ ազգային-ազատագրական շարժման և ՀՀԳ անվանի գործիչ: Ընտրվել է Վանի երեսփոխան, գործել Մուշուն: Անդամակցել է Ազգային պատվիրակությանը, մասնակցել ՀՀԳ 9-րդ Ընդհանուր ժողովին: Արժեքավոր հուշերի հեղինակ է:

30 Գրինֆիլդը Գերմանիայում ՀՀ դեսպանն էր: Կոմսը նրա մասին հետևյալ կարծիքն է հայտնում. «Գրինֆիլդը բացառիկ համակրելի մարդ մըն էր: Իրավաբան գերմանական համալսարանէն. Շատ կիրթ եւ փափկանկատ, պարկեշտ եւ վերին աստիճանի տակտ ունեցող մէկն էր, մանաւանդ խիստ կարգապահ, որով շահած էր բոլորիս յարգանքը»: Տե՛ս Փափագեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 190:

31 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԲԲ N. 38 արձանագր., կետ 6», 2. «Գործ N. 11 դաշնակներ, 17/0, 17/21»:

32 Նկատի ունի Սյունիքի կամ Լեռնահայաստանի ազատության համար պայքարողներին:
33 Այդ ժամանակ Անտանտի զխավոր դերակատարներն էին ԱՄՆ, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան:

3. Դաշնակներին համակրող հայ մտավորականության հսկայական մասին ամենայն հավանականությամբ դուր է գալիս վտարանդու դրությունը, սակայն պատրաստ է Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի կողմից որոշակի «երաշխիքների» դեպքում աշխատանքի համար վերադառնալ Հայաստան: Հայկական մտավորականությունն իրականում Հայաստանին անհրաժեշտ է, եթե բանակցությունները արդյունք տան թեկուզ այդ ուղղությամբ՝ անվնաս չեն լինի, և վերջապես,

4. Ինչպես արդեն ընկ. Չիչերինին հաղորդել եմ, «Հայկական հարցի» նկատմամբ Եվրոպական դեմոկրատիայի ուշադրությունը հրավիրելու նպատակով Խորհրդային Ներկայացուցիչներից մեկի դեմ դաշնակների վտարանդիական շրջանակներում ահաբեկչական ակտ է ծրագրվում:

Առավել կամ նվազ բավարարելի դեպքում բանակցություններն անպայման կարող են դաշնակների այդ արկածախնդրական ակտը³⁴ կանխել:

Սակայն, ընդունելով բանակցությունների մասին այդ առաջարկը, ես կցանկանայի ամենակարգից դաշինքի թեմայի մասին բանակցությունների հնարավորության առաջն առնել: Ինչքան ինձ հայտնի է՝ Հայաստանում իմ ընկերները կհամաձայնեն, որ դաշնակների հետ ներկա պայմաններում մեզ համար դաշինք կազմելու ոչ մի քաղաքական իմաստ չկա:

Կարծում եմ նաև, որ խիստ նպատակահարմար կլինի արտասահմանում Ռ-ՍՖԽՀ դիվանագիտական ներկայացուցիչներից մեկի (օրինակ Բեռլինում ընկ. Լիտվինովի³⁵) մասնակցությունը որպես Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի ներ-

կայացուցիչ:

Ինքնին հասկանալի է, որ բանակցությունները պետք է վարվեն Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի հրահանգներով:

Կոմունիստական ողջույնով՝
Տեր-Գաբրիելյան³⁶ [ստորագրություն]

1921թ. հունիսի 7
N. 642
Մոսկվա

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, քթ. 4-5:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4
Ռ-Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԱՅՈՒՐՈՒՅԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

Հույժ գաղտնի
Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտե

Կենտկոմի Քաղբյուրոյի 8.06.1921 թ. N 38
նիստի արձանագրության քաղվածք

Քաղբյուրոյի անդամների հարցումով³⁷
10.05.21 թ.

6. Դաշնակների հետ բանակցությունների մասին:

Ա. Բանակցությունները նշանակել Ռ-ի գալույն:

Բ. Բանակցություններ վարելու համար ուղարկել ընկ. Տեր-Գաբրիելյանին, երկրորդ ընկերոջը՝ ընկերներ Տեր-Գաբրիելյանի, Չիչերինի և Մոլոտովի համաձայնությամբ:

Գ. Ռ-ի գալույն բանակցություններին ներգրավել ընկ. Իոֆֆեին³⁸:

34 Սկստի ունի արտասահմանում խորհրդային ներկայացուցիչների նկատմամբ ահաբեկչական ակտի կատարումը:

35 Լիտվինով Մաքսիմ Մաքսիմի (Վալլախ Մեեր-Գենոխ Սոխեյ) (1876-1951) – Էստոնիայում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ (1920), ՌՍՖՍՀ և ԽՍՀՄ փոխարտգործող կոմ (1921-1930, 1941-1946), արտգործող կոմ (1930-1939): Հայտնի էր իր թուլական և անհավասարակշիռ բնավորությամբ:

36 Տեր-Գաբրիելյան Սահակ Միրզայի (1886-1937) – ՀԽՍՀ նշտական ներկայացուցիչ ՌՍՖՍՀ-ում (1921-1922), Անդրկովկասի ներկայացուցիչ ԽՍՀՄ կառավարությունում (1923-1928), ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ (1928-1935): Սպանվել է չեկիստների կողմից: Նրա մասին Վ. Փափազյանը տվել է հետևյալ գնահատականը. «ԻՐԱԻ ՀԱՅ ՄԵՆ ԵՐ՝ սրտցաւ եւ իր ժողովուրդի շահերուն ջերմ պաշտպանը»: Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 226:

37 Այսինքն Քաղբյուրոյի նիստում քվեարկությամբ չի որոշվել, այլ նիստից դուրս՝ հեռակա հարցմամբ:

38 Իոֆֆե Ադոլֆ Աբրահամի (1883-1927) – Բրեստ-Լիտովսկում խորհրդային պատվիրակության նախագահ: Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի հետ խաղաղության պայմանագրեր է կնքել (1920): Ռ-Կ(բ)Կ Կենտկոմից բուժման համար գումար չստանալու պատճառով ինքնասպան է եղել: Ընտանիքը բռնադատվել է Վ. Փափազյանը տալիս է Իոֆֆեի հետևյալ գնահատականը. «Խելացի, ճկուն եւ արագ ընթրողութեամբ օժտուած մեկը, որ վարժուած էր վարպետօրէն ձեւակերպել քննուած հարցերը»: Տե՛ս Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 214:

Կենտկոմի քարտուղար (Վ. Մոլոտով)
ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 3: Մեքենա-
գիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանութ-
յուն ռուսերենից:

ԹԻՎ 5

**Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՎ(Բ)Կ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐ**³⁹

1921թ. հունիսի 10
ՈՎ(Բ)Կ Կենտկոմին

Դաշնակների հետ բանակցությունների
հարցի առթիվ ԱԳԺԿ⁴⁰ Կոլեգիան լրիվ համա-
ձայն է, որ այդ բանակցությունները Տեր-Գաբ-
րիելյանի մատնանշած նպատակներով ցան-
կալի են: Այդ բանակցությունները կարող են
Ջանգեզուրի մարզի գյուղացիության շրջա-
նում, որտեղ շարունակվում է դաշնակների
ապստամբությունը, ազդեցություն թողնել:
Դրանք կօգնեն բացահայտել քեմալականնե-
րի հետ դաշնակների բանակցությունների
բնույթը, կնպաստեն մտավորականության
աշխատանքի ներգրավմանը Խորհրդային
Հայաստանում: Վերջապես, հնարավոր կլինի
այդ դեպքում բացահայտել դաշնակների կող-
մից նախապատրաստվող ահաբեկչական
ակտերի հարցը և նրանց Խորհրդային Հայաս-
տանի կողմից հարյուրապատիկ բռնաճնշում-
ներով սպառնալ: Պատասխանատու հայ կո-
մունիստների խորհրդակցությունից ելնող այդ
առաջարկություններին ԱԳԺԿ Կոլեգիան
միանգամայն համաձայն է և առաջարկում է
այդ նպատակի համար ոչ թե հեռավոր Բեռլին,
այլ առավել մոտիկ Ռիգա գործուղել ընկ. Տեր-
Գաբրիելյանին և ևս որևէ մեկի պատասխա-
նատու հայ ընկերներից, օրինակ՝ ընկ. Քա-
թանյանին⁴¹:

Այդ բանակցություններին մասնակցու-
յան համար, որպես ՈՎ(Բ)Կ Կենտկոմի ներ-
կայացուցիչ, հարկավոր է ներգրավել Ռիգա-
յում գտնվող ընկ. Իոֆֆեին: ԱԳԺԿ Կոլեգիան
համաձայն է, որ ներկա պայմաններում
դաշնակների հետ դաշինքը պետք է մերժվի:
Բեռլինի հետ մեր կապը բավականին թույլ է,
այնինչ Ռիգայի հետ մեզ կապում է ուղիղ հե-
ռագրաթել և Ռիգայում բանակցություններն
այնպիսի հարմարություններ են ներկայաց-
նում, որոնցից Բեռլինը զուրկ է:

Արտգործող կոմ. Գ. Չիչերին

Ընկ. Լենինի ձեռքով նշագրում.⁴²

Ընկ. Մոլոտով, ես Ռիգայի և Իոֆֆեի կողմ
եմ: Լենին:

Ընկ. Մոլոտովի ձեռքով նշագրում.

Առաջարկում եմ. Ա. Ռիգա ուղարկել ընկ.

Տեր-Գաբրիելյանին և երկրորդ ընկերոջը ըն-
կերներ Տեր-Գաբրիելյանի, Չիչերինի և Մոլո-
տովի համաձայնությամբ, Բ. Ռիգայում բա-
նակցություններին ներգրավել ընկ. Իոֆֆեին:
Վ. Մ.[ոլոտով]

Հարցնել Քաղբյուրոյի մյուս անդամնե-
րին: Վ. Մոլոտով:

Տեխնիկական քարտուղարի նշագրում.

Ընկ. Ջինովև⁴³, ՀԱՄԱՉԱՅՆ ԵՄ:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 12: Մեքենա-
գիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանութ-
յուն ռուսերենից:

ԹԻՎ 6

**Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Վ. ՄՈԼՈՏՈՎԻՆ**⁴⁴

1921 թ. հունիսի 11
Ընկ. Մոլոտովին,

Հարգելի ընկեր,

Ռիգայում դաշնակների հետ բանակցու-
թյան հարցի առթիվ ԱԳԺԿ Կոլեգիան լրիվ համա-

39 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԲԲ N. 38 արձանագր., կետ 6», 2. «Գործ N. 11 դաշնակներ, 17/0, 17/21»: Փաստաթղթի վերջում կա հետևյալ ծանոթագրությունը. «Բնագիրը գործից հանվել և հանձնվել է Լենինի ինստիտուտ»:

40 Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ:

41 Քաթանյան Ռուբեն Պավելի (1881-1966) - եղել է ՌՍՖՍՀ արտաքին հետախուզության պետ (1921), ապա աշխատել է դատա-դատախազական մարմիններում: 1938-1955 թթ. բռնադատվել է:

42 Այստեղ և այսուհետև ընդգծումները փաստաթղթին են:

43 Ջինովև Գրիգորի Եվսեյի (Ռադոմիսլսկի Եվսեյ Արոնի) (1883-1936) – ՈՎ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ (1921-1926), Կոմունիստական Ինտերնացիոնալի նախագահ (1919-1926): Գնդակահարվել է:

44 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԲԲ N. 38 արձանագր., կետ 6», 2. «Գործ N. 11 դաշնակներ, 17/0, 17/21»:

յունները պետք է առաջին հերթին վարվեն հայ կոմունիստների կողմից, քանի որ դաշնակների հետ դաշինքի թույլատրման կամ մերժման, հայ մտավորականությանը խորհրդային աշխատանքում ներգրավման, խորհրդային ներկայացուցիչների դեմ ահաբեկչական ակտերի դեպքում բռնաճնշումների սպառնալիքի վերաբերյալ հարցերը վերաբերում են անմիջապես Հայկական Խորհրդային Հանրապետությանը: Դրա համար էլ առաջարկում են, որպեսզի այդ բանակցությունները վարվեն ընկ. Տեր-Գաբրիելյանի, ընկ. Իռֆֆեի և ևս որևէ հայ ընկերոջ կողմից, ում մասին հարկավոր է դեռ Ձեր և ընկ. Տեր-Գաբրիելյանի հետ պայմանավորվել:

Կոմունիստական ողջույնով՝
Գ. Չիչերին [ստորագրություն]

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 11: Մեքենա-գիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7

Վ. ՎԱՀԱՆՅԱՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻ ՔԱՂՔՅՈՒՐՈՅԻՆՆԵՐԻՆ⁴⁵

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյին
Թանկագին ընկերներ,

Ի պատասխան Ձեր նամակի՝ հայտնեմ մի քանի նկատառումներ: Երեք շաբաթ առաջ դաշնակներին մոտ շրջանակներից ինձ հաղորդեցին, որ Քեմալ փաշայի և դաշնակցականների միջև բանակցություններ են գնում, ընդ որում, բավականին ուշացած տեղեկություններ կային, որ բանակցությունները վարվում են հետևյալ սկզբունքների հիման վրա. Հայաստանը հրաժարվում է Սևրի պայմանագրից, իսկ Թուրքիան իր հերթին ճանաչում է Հայաստանը՝ ռուսական նահանգների (Երևա-

նի, Կարսի և Ելիզավետպոլի մի մասը ու երեք գավառներ), Էրզրումի (առանց ք. Էրզրումի), Բիթլիսի և Վանի [նահանգների], կազմով:

Այդ նույն աղբյուրներից մեզ հայտնի դարձավ, որ Քեմալ փաշան՝ որպես վերջնագրային պահանջ, առաջադրում է ներկա Խորհրդային Հայաստանի ապախորհրդայնացումը: Եվրոպայում, մինչ այդ ժամանակը դաշնակները, կազմակերպել էին «հայրենիքի փրկության» կառավարություն⁴⁶, որը Կոստանդնուպոլսում գործակալություն⁴⁷ ուներ:

«Դաշնակցություն» կուսակցությունն ակնհայտորեն փորձել է ուժով իրականացնել այդ ապախորհրդայնացումը: Դա հաստատվում է նրանով, որ հակահեղափոխական կառավարությունը⁴⁸ ապրիլին նույնպես անվանվել է հայրենիքի փրկության կոմիտե⁴⁹ և շատ ինտենսիվորեն փորձել է կապվել Քեմալի հետ: Սակայն, համոզվելով ռազմական ուղով այդ հարցի լուծման անհնարիմության մեջ, «Դաշնակցություն» կուսակցությունը որոշել է ՌԿ(Բ)Կ հետ բանակցություններին ապավինել:

Իմ խորին համոզմամբ, մեր կուսակցության Կենտկոմին հղած նրանց ուղերձի անմիջական առիթն այդ է:

Պատասխանատու ընկերների խորհրդակցության ժամանակ, որտեղ քննարկվել է այն հարցը, թե արդյոք դաշնակների առաջարկը պետք է ընդունել, ես պնդեցի, որպեսզի բանակցություններն ընդունվեն ձեզ հայտնի շարժառիթներով: Մեր կուսակցության Կենտկոմը պատասխանատու ընկերների կարծիքի հետ համաձայնեց, սակայն Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտկոմը վճռականորեն առարկում է, և մեզ հարկ կլինի այդ հարցը կրկին քննարկել և այն էլ մեծ ուշադրությամբ, քանի որ, իմ կարծիքով, Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի այդ սխալ քաղաքական քայլը և՛ Հայաստանին, և՛ Կով-

45 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԲԲ N. 42 արձանագր., կետ 11», 2. «Գործ N. 41, 49, 17/0»: Փաստաթղթի վրա կա «ՅամԿ(Բ)Կ Կենտկոմի գաղտնի արխիվ» առանձին շտամպ:

46 Յայրենիքի Փրկության կոմիտեն կամ նրա կառավարությունը կազմակերպվել էր Երևանում Փետրվարյան ապստամբությունից հետո: Իսկ Եվրոպայում գործում էր Յայաստանի առաջին Յանրապետության վտարանդի կառավարությունը:

47 Պետք է հասկանալ ներկայացուցչության իմաստով:

48 Նկատի ունի հետփետրվարյան շրջանում Սյունիքում ստեղծված Ս. Վրացյանի կառավարությունը:

49 Բնագրում բառերը գրված են փոքրատառերով:

կասին շատ դժվարին ու բարդ իրավիճակի առջև են կանգնեցնում: Իրականում, եթե երկրորդ հեռագիրը (կցվում է) ինչ-որ բան է ասում ավելին, քան այն, ինչ մեզ հայտնի էր մինչ այժմ, դա այն է, որ այսօր Չանգեգուրյան հարցը Խորհրդային Հայաստանի մեկ մարզի բանդիտա-հակահեղափոխական խռովության շրջանակից դուրս է գալիս: Ինչպես կարելի է դա կանխել՝ բանակցություններում դաշնակամուսավարա-թուրքական միության առանձնահատկությունների օգտագործման փորձով՝ նրա կազմալուծման համար: Հասկանալի է, որ նման փորձի հաջողության հավանականությունը շատ չէ երաշխավորված, բայց չպետք է մոռանալ, որ ծայրահեղորեն սրված ազգային հակամարտության մթնոլորտում այդպիսի խուսանավումները բացարձակապես անխուսափելի են: Ներկա պայմաններում Չանգեգուրի հարցի կարգավորման առավել նվազ բանական մեթոդը ռազմական լուծման ուղին է:

Առաջին հեռագրի փաստարկները ոչ մի դեպքում բանակցությունների դեմ չեն խոսում, եթե նույնիսկ դրանք ամբողջովին համապատասխանեին իրերի իրական վիճակին, սակայն ըստ այն ամենի, ինչ հայտնի է ինձ նրանց իսկ գեկույցներից, երկրորդ հաստատումը շատ նման է չափազանցման, հատկապես եթե հիշենք Հայաստանի վերջին իրադարձությունները:

Բացի զուտ հայկականից, բանակցությունները և այդ հարցում ճշգրիտ տեղեկացվածությունը մեզ համար խիստ անհրաժեշտ են միլիտարական⁵⁰ շարժման նկատմամբ ճիշտ և որոշակի վերաբերմունքի ձևավորման տեսանկյունից:

Եթե այդ հեռագրից հետո Հայաստանի ԽՍՀ պաշտոնական անձանց և հաստատությունների համար բանակցություններ վարելն անհնարին է, ապա ՌԿ(Բ)Կ Կենտկոմը բանակցություններ վարելու համար ջանք է ներդնելու, որպեսզի դաշնակներին Բաքվին այդքան մոտ սողացող այդ շղթայից դուրս մղի:

Ամփոփեմ. Քեմալ փաշայի հետ դաշնակների բանակցությունները, եթե մեր տեղեկությունները ճշգրիտ են, մեր կողմից պետք է անպայման օգտագործվեն և հնարավորինս հարմարեցվեն այդքան արդիական հայկական խնդրի լուծմանը:

Դաշնակների առաջարկները հարկավոր է ընդունել, ձգտելով ըստ ամենայնի նրանց թուրքիա-դաշնակներ-մուսավաթ եռյակ միությունից դուրս մղել:

Եվ արդեն սպառելով այդ հնարավորությունները՝ դրանց անհաջողության դեպքում, ինչպես դաշնակները, այնպես էլ մուսավաթն ու մենշևիկները պետք է Անդրկովկասից դաժանորեն քշվեն և արմատախիլ արվեն:

ՌԿ(Բ)Կ անդամ Վ. Վահանյան⁵¹
[ստորագրություն]

(Կուսակցական ծածկանունը ՏԵՐ)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, քթ. 15-17:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 8

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

1921 թ. հունիսի 20

Լսեցին.

Դաշնակների Արտասահմանյան բյուրոյի դիմումը ՌԿ(Բ)Կ Կենտկոմին ընկ. Չիչերինի միջոցով:

Որոշեցին.

1. Պաշտոնական բնույթ չտալով՝ Մոսկվայում բանակցությունները վարել տեղեկացված լինելու նպատակով:

2. Ընկ. Տեր-Գաբրիելյանին լրացուցիչ հրահանգներ ուղարկել:

3. Չանգեգուրյան ընդհատակյա աշխատանքն ուժեղացնել՝ նոր աշխատողներ ուղարկելով:

ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, ք. 11 հակ.:

Մեքենագիր: Բնագիր: Թարգմանություն ռուսերենից:

50 Քեմալական:

51 Տեր-Վահանյան Վաղարշակ Գարությունի (1893-1936) – Գամառուսաստանյան Կենտրոնի անդամ (1918-1920), «Մարքսիզմի դրոշի ներքո» ամսագրի խմբագիր, երեք անգամ հեռացվել է Կոմկուսից: Գնդակահարվել է:

ԹԻՎ 9
**ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՎԱՀԱՆՅԱՆԻՆՆԻ**⁵²

Ելից 3373
1921թ. հունիսի 24

Ընկ. Վահանյանին,

Ընկ. Մոլոտովի հանձնարարությամբ Ձեր եզրակացությանն են ուղարկում ընկ. Մյասնիկովի դիմումը: Խնդրում են պատասխանել այսօր երեկոյան (Վոզդվիժենկա 5, Կենտկոմի Քարտուղարություն), քանի որ վաղը հարցը պետք է քննարկվի Քաղբյուրոյի նիստում:

Կոմունիստական ողջույնով

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 18: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 10
**Ա. ՄՅԱՆԻԿՈՎԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Ս.
ՏԵՐ-ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻՆՆԻ**⁵³

Մոսկվա, Արտգործժողկոմատ, Հայաստանի ներկայացուցիչ Տեր-Գաքրիելյանին

Ներքոնշյալը հասցեագրվում է Ձեզ և ՌԿ(Բ)Կ Կենտկոմին: ՀԿԿ Կենտկոմի ու Հայաստանի ԽՍՀ Կառավարության անունից հայտարարում են, որ 1921 թ. մայիսի 26-ի Վ. Փափազյանի ստորագրությամբ «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչների ուղերձը ՌԿ(Բ)Կ Կենտկոմին պետք է անպատասխան թողնվի, ինչի հիմնավորում է ծառայում հետևյալը: Առաջին, Խորհրդային իշխանությունը և Կոմկուր դաշնակների հետ ոչ մի պայմանագրային հարաբերությունների մեջ չեն եղել և չեն: Երկրորդ, ճիշտ չէ, որ դաշնակները Հայաստանի աշխատավորության և ընդհանրապես՝ հայերի շրջանում որևէ

ազդեցություն ունեն, ընդհակառակը, այժմ հայ չկա, որ չանիծի այդ կուսակցությանն իր արկածախնդրությունների, խարդախությունների, ուխտադրությունների և անասհման հակահեղափոխականության համար: Երրորդ, սույն մայիսի 16-ին դաշնակները նենգորեն հարձակվեցին մեր գործերի վրա, չնայած Չանգեզուրյան գործը⁵⁴ խաղաղ ճանապարհով կարգավորելու մեր ձգտումներին և քայլերին: Խորհրդային Հայաստանը Չանգեզուրի հետ պատերազմի մեջ է, և դաշնակների կամքով Չանգեզուրյան հարցն այսուհետ կլուծվի պատերազմով: Այս բոլոր նկատառումներից ելնելով, լավ կլինեք դաշնակ մտավորականության մնացորդներին ուղարկել մեզ մոտ Հայաստան, թող նրանք այստեղ զանգվածների առջև բացահայտ հայտարարեն, թե ինչ են ուզում: Մեր կարծիքով, ՌՍՖՍՀ-ին կից Հայաստանի ներկայացուցիչը բանակցություններին չպետք է մասնակցի, եթե նա մեկնել է բանակցությունների, ապա պետք է ետ կանչվի: Ծայրահեղ դեպքում՝ նա դաշնակների հետ կարող է խոսել մասնավոր կարգով, Մոսկվայում նստած: Ն. 62/III:

Մյասնիկով⁵⁵

22.VI.21թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 19, 20:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 11
Ա. ՄՈՒՎՅԱՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ Ս. ՏԵՐ-ԳԱՔՐԻԵԼՅԱՆԻՆՆԻ⁵⁶

Մոսկվա, Արտգործժողկոմատ, Տեր-Գաքրիելյանին

Օրերս Թավրիզից ժամանած Սիրական Տիգրանյանը⁵⁷ ոչ պաշտոնապես հաղորդեց

52 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԶԲ Ն. 42 արձանագր., կետ 11», 2. «Գործ Ն. 41, 49, 17/0»:
53 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԶԲ Ն. 42 արձանագր., կետ 11», 2. «Գործ Ն. 41, 49, 17/0»:
54 Նկատի ունի Լեռնահայաստանի հերոսամարտը:

55 Մյասնիկյան Ալեքսանդր Ֆյոդորի (1886-1925) – ԴԽՍՀ ժողկոմխորհի նախագահ և ռազմական գործերի ժողկոմ (1921), Անդրկովկասի Դաշնային խորհրդի նախագահ և ՌԿ(Բ)Կ Անդրկովկասյան կոմիտեի առաջին քարտուղար (1922-1925): Զոհվել է ավիավթարից:

56 Վերին աջ անկյունում կան շտամպեր. 1. «ԶԲ Ն. 42 արձանագր., կետ 11», 2. «Գործ Ն. 41, 49, 17/0»:
57 Տիգրանյան Սիրական (1875-1947) – ԳՂ Արտաքին գործերի (1918-1919), ապա լուսավորության նախարար, հետագայում՝ խորհրդարանի փոխնախագահ:

[հետևյալը]. «Մայիսի 12-ին Ջանգեզուրում տեղի է ունեցել դաշնակների գաղտնի խորհրդակցություն Անգորայի կառավարության ներկայացուցիչների և մուսավաթականների հետ: Խորհրդակցությանը մասնակցել է Թավրիզից ժամանած Վրացյանը: Խորհրդակցության որոշումները հայտնի չեն: Խորհրդակցությունից մի քանի օր անց լուծարվել է Նժդեհի կառավարությունը, որ իրեն անվանում էր Լեռնահայաստանի կառավարություն և կազմավորվել է նոր կառավարություն, որը կրում է «Միացյալ Հայաստանի Կառավարություն» անվանումը⁵⁸: Նոր կառավարության անվանման մեջ «Միացյալ» բառը թուրքական Հայաստանի տարածքի մի մասի առնչությամբ դաշնակներին թուրքերի հետ համաձայնության գալու հնարավորություն է տալիս: Նոր կառավարության ղեկավարը Վրացյանն է, կառավարության մեջ մտնում են Համո Օհանջանյանը, Նժդեհը, Ռուբեն Տեր-Մինասյանը: Ջանգեզուրի ներկայացուցիչներ չկան: Կոստանդնուպոլսի հայկական հակադաշնակական մամուլը նույնպես հաղորդում է քեմալականների հետ դաշնակների բանակցությունների մասին: Լիարժեք տեղեկատվություն առայժմ չկա: Մենք Ջանգեզուրի հետ պատերազմի վիճակում ենք: Բովանդակությունը խնդրում են հաղորդել ընկ. Չիչերիմին»:

N. 1938.
Մոսկվան⁵⁹

Խորհրդային Հայաստանի Ժողովուխորից, 1921 թ. հունիսի 19

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 21: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 12

ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏՐԱԿԱՆ ՔԱՂՎՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հուլիսի 25

Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտե

Քաղվածք Կենտկոմի Քաղբյուրոյի 25. VI.1921թ. N. 42 նիստի արձանագրությունից

11. Դաշնակների հետ բանակցությունների մասին:

Ուժի մեջ թողնել նախկին որոշումը:

Կենտկոմի քարտուղար (Վ. Մոլոտով)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 13: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 13

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1⁶⁰

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի և «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչների նիստի Ռիգա, 1921թ. հուլիսի 8

Ներկա են՝

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի կողմից – ընկերներ Ա. Իռֆֆե, Տեր-Ղաբրիելյան, Տեր-Վահանյան: ՀՅ «Դաշնակցության» կողմից – ընկերներ Վ. Փափագյան, Վ. Նավասարդյան, Ա. Իսահակյան:

Քարտուղար Ֆրեյման:

Նիստը բացվում է կեսօրից հետո 3 1/2-ին:

Բացելով նիստը, ընկ. Իռֆֆեն առաջարկում է նիստերի վարման հետևյալ արարողակարգն ընդունել.

Յուրաքանչյուր կողմ ընտրում է իր նա-

58 Տաթևի համագումարը 1920 թ. դեկտեմբերի 25-ին Ջանգեզուրը հայտարարեց Ինքնավար Սյունիք: 1921թ. ապրիլի 27-ին Տաթևի երկրորդ համագումարում Ինքնավար Սյունիքը հռչակվեց Լեռնահայաստան, վարչապետ ընտրվեց Գ. Նժդեհը: Լեռնահայաստանը 1921 թ. հունիսի 11-ին հայտարարվել է Հայաստան, այլ ոչ թե Միացյալ Հայաստան: Վարչապետ է հռչակվել Ա. Վրացյանը, իսկ Գ. Նժդեհը՝ զինվորական նախարար: 59 Մոսկվան Աքսեմազ Հարությունի (1886-1929) – Հայաստանի Հեղինակ անդամ, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար, ՀԽՍՀ արտգործոժողկոմ (1920-1922), ՀԽՍՀ լուսավորության ժողկոմ (1923-1929): 60 Գործում պահպանվել են միայն N 1 և N 5 արձանագրությունները:

խագահին, ովքեր հերթականությամբ նախագահում են նիստերում,

Խոսքի համար յուրաքանչյուր կողմի պատվիրակները դիմում են իրենց կողմի նախագահին, իսկ նիստի նախագահողն էլ հռետորներին ձայն է տալիս գրանցման կարգով,

Նիստերի ժամանակացույց հաստատել երեկոյան 3 1/2-ից մինչև 7 1/2-ը,

Յուրաքանչյուր կողմի խորհրդակցության համար ընդմիջում խնդրելու իրավունք տալ,

Նախորդ նիստի արձանագրությունը հաջորդ նիստի սկզբում կարդալ և հաստատել:

Ընկ. Փափագյանն առաջարկում է ընկ. Իոֆֆեին մշտական նախագահ ընտրել: Առաջարկությունն ընդունվում է:

Մանրատների փոխանակումից հետո, Հայաստանում «Դաշնակցություն» և Կոմունիստական կուսակցությունների փոխհարաբերությունների ներկայացման համար ձայնը տրվում է ընկ. Իսահակյանին:

Անցնելով Հայաստանում «Դաշնակցություն» և Կոմունիստական կուսակցությունների փոխհարաբերությունների ներկայացմանը, ընկ. Իսահակյանը նշում է, որ մինչև նախորդ տարվա [1920] ապրիլն այն ժամանակվա կառավարող և կոմունիստական կուսակցությունների միջև տարածայնություններ չեն եղել: Հեղկոմի (Կասյանի⁶¹) գրեթե ողջ կազմը պետական ծառայության մեջ էր՝ պատասխանատու պաշտոններ զբաղեցնելով: Կոմունիստները կուսակցական աշխատանք են տարել, լեզալ հրատարակել իրենց թերթը, օգտվել ազիտացիայի, ժողովների ազատության և այլնի իրավունքից: Հայաստանի այն ժամանակվա կառավարության վերաբերմունքը կոմունիստների նկատմամբ փոխվեց այն պահից, երբ ապրիլին պատահաբար նրանց ձեռքն ընկած փաստաթուղթը հաստատեց Հա-

յաստանի վրա համատեղ հարձակման վերաբերյալ թուրքական ազգայնականների հետ Ռուսական Կառավարության համաձայնությունը: Նազարեթյանից⁶² ճշտելով, թե իրականում գոյություն ունի արդյոք ՌՍՖՍՀ և քեմալականների միջև այդպիսի պայմանագիր, վերջինս չժխտելով այդպիսի պայմանագրի գոյության հնարավորությունը՝ հաստատեց, որ սակայն եթե նույնիսկ պայմանագիրը գոյություն էլ ունի, ապա ՌՍՖՍՀ-ն Հայաստանի խորհրդայնացման նպատակ չի հետապնդում: Քեմալականների հետ պայմանագիրը և մայիսին բոլշևիկների կազմակերպած ապստամբությունը Հայաստանի Կառավարության դեմ՝ վերջինիս մղեց բոլշևիկների նկատմամբ բռնաճնշումների ուղի:

Մայիսյան ապստամբությանը հետևեց այլ ապստամբությունների մի ողջ շարք և ՌՍՖՍՀ ներկայացուցիչներ ընկերներ Լեզրանի և Տեր-Գաբրիելյանի հետ զինադադարի կնքման ժամանակ վերջիններս հաստատեցին, որ Ռուսաստանը մտադիր չէ Հայաստանը խորհրդայնացնել: Այդ ժամանակ թուրքական ռազմաճակատում դեպքերն այնպիսի ընթացք ստացան⁶³, որ թուրքական ուժերի գերակշռության ազդեցությամբ նախկին հայկական կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ին թուրքերի հետ ստիպված համաձայնագիր⁶⁴ ստորագրեց՝ նրանց տալով Կարսը:

Չնայած Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի բարիդրացիական հարաբերությունների առթիվ Լեզրանի հավաստիացումներին, որոշ ժամանակ անց, Կարմիր Բանակը հանկարծակի հարձակվեց Հայաստանի վրա: Վերջինս, ուժեղ բանակ չունենալով, ստիպված էր անձնատուր լինել և իշխանությունը Հեղկոմին հանձնելու մասին համաձայնագիր ստորագրել հետևյալ պայմաններով⁶⁵.

61 Կասյան (Տեր-Կասպարյան) Սարգիս Դովհանեսի (1876-1937) – Հայաստանի Հեղկոմի նախագահ (1920): Եղել է Անդրկովկասյան համալսարանի ռեկտոր (1924-1927), Անդրկովկասի (1927-1931) և ՀԽՍՀ (1928-1930) Կենտրոնականների նախագահ, ՌՍՖՍՀ Գերագույն դատարանի նախագահ (1931-1934): Գնդակահարվել է:

62 Նազարեթյան Զմայակ Մակարի (1889-1937) – ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի քարտուղար (1920), եղել է Ի. Ստալինի քարտուղարը, Անդրկովկասյան երկրամասային կոմիտեի քարտուղար, ՌՍՖՍՀ Բանգյուղտեսչության ժողկոմ: Գնդակահարվել է:

63 Նկատի ունի 1920 թ. հայ-թուրքական պատերազմը:

64 Խոսքը Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին է:

65 1920 թ. դեկտեմբերի 2-ին Բ. Լեզրանի և Դրոյի ու Յ. Տերտերյանի կնքած համաձայնագրի ամբողջական տեքստը տես «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն)». Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2000, էջ 383-384:

1. Հայաստանը նաև խորհրդային կարգերի ժամանակ մնում է անկախ հանրապետություն:

2. Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում է Հայաստանի կազմում ներառել Երևանի ողջ նահանգը, Չանգեզուրի գավառը և Ելիզավետպոլի նահանգի Ղարաբաղի գավառի լեռնային մասը, վերջին հայ-թուրքական պատերազմի կապակցությամբ Վրաստանի բռնազավթման տակ գտնվող Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի ողջ տարածքը, Կարսի մարզի հարավ-արևելյան մասը՝ բացառությամբ Կարս քաղաքի:

3. Կարսի և Թուրքական Հայաստանի հարցերի լուծումը Ռուսաստանը հետաձգում է առավել բարենպաստ ժամանակի:

4. «Դաշնակցություն» և այլ քաղաքական կուսակցություններին պատկանելության համար ոչ ոք չի հետապնդվում:

5. Հայկական հանրապետության բանակի սպաները և զինծառայողները Հայաստանի նախկին կառավարությունների հրամաններով իրենց կատարած գործողությունների համար չեն հետապնդվում:

6. Հայաստանի Հեղկոմին անդամակցում են հինգ կոմունիստներ և նախկին դաշնակցականներից երկուսը՝ Դրոն և Տերտերյանը⁶⁶:

Կարմիր զորքերի կողմից Հայաստանի գրավումից հետո հաստատվեց ահաբեկչության և բռնազրավումների ռեժիմ: Խորհրդային իշխանությունների կողմից համաձայնագրի ոչ մի կետ չի հարգվել: Բռնակչությունը նոր իշխանության ճնշման ներքո խեղդվում էր, չնայած համաձայնագրին⁶⁷ բոլոր սպաները ձերբակալվեցին⁶⁸ և ուղարկվեցին Ռուսաստան, և դրանց հետևած ապստամբություններն, ըստ էության, իշխանության իրականացրած քաղաքականության արդյունքն էին, և ոչ

թե «Դաշնակցություն» կուսակցության խռովության: Հնարավոր է, որ ավելորդ բախումներից խուսափելու համար «Դաշնակցություն» կուսակցության առանձին անդամներ պետք է շարժման գլուխ կանգնեին, որպեսզի այն հունի մեջ դնեին, սակայն այդ «Դաշնակցության» Կենտկոմի որոշմամբ չի կատարվել:

Իոֆֆեն նշում է, որ ոչ թե կուսակցությունների, այլ պետությունների փոխհարաբերությունները ներկայացվեցին, և քանի որ բանակցությունները վարվում են ոչ թե պետությունների, այլ կուսակցությունների միջև, ինքը կցանկանար իմանալ ներկա պահին «Դաշնակցություն» կուսակցության քաղաքական հավատամքը, նրանց և Հայաստանի կոմունիստական կուսակցության միջև տարածայնության հարթման և համաձայնության հնարավորության սկզբունքները: Նա այդ հարթությունում է առաջարկում զրույցը վարել: Ապա նա կտրականապես առարկում է Հայաստանի վրա հարձակման առթիվ ՌԱՖՆՀ և քեմալականների միջև պայմանագրի գոյության մասին հիշատակման դեմ:

Տեր-Գաբրիելյանը նշում է, որ Հայաստանի վրա հարձակման առթիվ քեմալականների հետ Խորհրդային Ռուսաստանը պայմանագիր չի կնքել, իսկ եթե Նազարեթյանի հայտարարությունը եղել է, ապա այն ամբողջովին թյուրիմացություն է: Անդրադառնալով մայիսյան ապստամբությանը, Տեր-Գաբրիելյանը նշում է, որ դեմոկրատական Հայաստանի երկու տարվա գոյությունը բնակչությանը ելույթի դրդեց, ինչն աջակցվում և կազմակերպված էր հայ կոմունիստների կողմից:

Դեռ մինչև Լեզրանի հետ օգոստոսյան համաձայնագրի⁶⁸ կնքումը, նշում է Տեր-Գաբրիելյանը, նախկին հայկական կառավարութ-

66 Տերտերյան Յամբարձում Մանվելի (1884, Նոր Նախիջևան-1955, Թեհրան) – եղել է ՀՀԿ Նոր Նախիջևանի կոմիտեի նախագահ, Հայաստանի խորհրդարանի անդամ: 1920 թ. Մոսկվայում և Երևանում մասնակցել է հայ-ռուսական բանակցություններին: 1920 թ. նոյեմբերի 24-ից դեկտեմբերի 2-ը եղել է ՀՀ ֆինանսների նախարար, հանրային խնամատարության և վերաշինության նախարարի պաշտոնակատար, Հայրենիքի Փրկության կոմիտեի անդամ:

67 ՀՀ բանակի շուրջ 1500 սպաներ են աքսորվել Ռյազանի համակենտրոնացման ճամբար:

68 Խոսքը 1920 թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Բ. Լեզրանի և Ա. Բաբայանի ու Ա. Չամալյանի կնքած ՀՀ-ՌԱՖՆՀ խաղաղության համաձայնագրի մասին է: Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ.», (Քաղաքական պատմություն), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», էջ 248-249:

յան Շանթի⁶⁹ գլխավորած պատվիրակությանը մատնանշվել է Հայաստանի վրա թուրքերի հարձակման հնարավորությունը և խորհուրդ տրվել դրանից խուսափելու համար ռուսական զորքերով զբաղեցնել Թուրքիային հարակից սահմանները: Այդ առաջարկությունը Շանթի կողմից մերժվել է: Չնայած Հայաստանի սպառնալից դրությանը՝ երեք ամիս ՌՍՖՆՀ Լիազոր Ներկայացուցչությանը Հայաստան չէին թողնում անցնել, մինչդեռ նրա խնդիրն էր Հայաստանի հետ համաձայնագիր կնքելը: Այդ ժամանակահատվածում թուրքերը խմբավորեցին իրենց զորքերը, և 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-թուրքական հաշտության պայմանագրի բոլոր հետևանքները հարկավոր է դաշնակցական կառավարության հաշվին վերագրել:

Ինչ վերաբերում է կապիտուլյացիաների մասին համաձայնագրին⁷⁰ և Հայաստանում իրականացված խորհրդային քաղաքականությանը, Տեր-Պարբիեյանը նշում է, որ սպաներին անձնական երաշխիքներ չեն տրվել⁷¹, ռազմական և ներքին իրավիճակն է պահանջել նրանց ուղարկումը Ռուսաստան, քանի որ դաշնակցների կողմից նախապատրաստվում էր սպասամբություն, իսկ խռովարար Լեռնային Հայաստանը երկու անգամ նրան առաջարկված առճակատման խաղաղ լուծման փոխարեն՝ Խորհրդային Հայաստանի դեմ զենքով հանդես եկավ:

Իռֆֆեն նշում է, որ ՌՍՖՆՀ կառավարությունը ծայրամասային հանրապետությունների բռնի խորհրդայնացման կողմնակից չէր, իսկ հայ ժողովրդի կամքով խորհրդայնացած Հայաստանը պարտավոր է ստանալ և ստանում է ՌՍՖՆՀ-ի՝ որպես նրան բարեկամ տերության, աջակցությունը: Նա կուսակցությունների միջև տարածայնությունների պարզաբանման համար երկրորդ անգամ առաջարկում է հարցի քննարկումը կուսակ-

ցածրագրային հարթություն տեղափոխել:

Փափագյանը նշում է, որ Հայաստանի խորհրդայնացումը կատարվել է դրսից, Կարմիր Բանակի օգնությամբ: Մայիսյան շարժումը արկածախնդրություն էր, բավարար կազմակերպված չէր, և այդ պատճառով էլ՝ դրա ճնշումն այդպիսի հեշտությամբ հնարավոր դարձավ:

Ապա նա նշում է, որ մինչև կարմիր զորքերի կողմից Հայաստանի գրավումը, արդեն կազմվել էին ձեռքարկված ենթակա դաշնակցների ցուցակներ: Պատասխանելով Տեր-Պարբիեյանին, որը նշեց ճանապարհին Լեզրանի եռամսյա ուշացման հանգամանքը, նա հարցնում է, թե ինչու պայմանագիրը, հանուն որի ստորագրման ուղարկվել էր Լեզրանը, երեք ամիս Մոսկվայում գտնվող Շանթի հետ չի կնքվել: Նախկին հայկական կառավարությունն այդ հարցում դիտարկում էր խարդախություն, և դրանով էր պայմանավորված ճանապարհին Լեզրանի ուշացումը:

Տեր-Վահանյանը, նիստի վարման կարգի համաձայն խոսք վերցնելով, նշում է, որ թեպետ ծայրամասային պետությունների նկատմամբ ՌՍՖՆՀ քաղաքականության մասին վեճը հետաքրքիր է, սակայն ինքն առաջարկում է թողնել պատմական մասը և անցնել գործնական կողմի քննարկմանը:

Նավասարդյանն առաջարկում է ներկա նիստը նվիրել իրադարձությունների պատմական կողմի քննարկմանը:

Իսահակյանը նշում է, որ կոմունիստների մոտ իրականությունը տեսությունից տարբերվում է: Այն բանի տակ, ինչ ներկա նիստում ասում են կոմունիստները, նա կարող է ստորագրել, իսկ կյանքում տեղի է ունենում ինչ-որ ուրիշ բան: Ապա, նա վստահություն է հայտնում, որ հայ ժողովուրդը Հայաստանում խորհրդային կարգերին դեմ է, և եթե այնտեղ

69 Շանթ Լևոն (Սեդրոսյան) (16.04.1869, Կ. Պոլիս-29.11.1959, Բեյրութ) – անվանի գրող, հասարակական-քաղաքական գործիչ: 1920 թ. գլխավորել է ՀՀ պատվիրակությունը Մոսկվայում: 1929 թ. հետո ապրել և ստեղծագործել է Բեյրութում:

70 Նկատի ունի իշխանությունը Հեղկոմին հանձնելու մասին համաձայնագիրը:

71 Նշյալ համաձայնագրի 4-րդ կետում նշվում էր. «Հայկական բանակի հրամանատարական կազմը մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը բանակի շարքերում կատարած գործողությունների համար ոչ մի պատասխանատվության չի ենթարկվում»: Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ., էջ 283:

ռուսական զորք չլինի, խորհրդային իշխանությունն անհապաղ կընկնի: Նրա գոյությանը ցույց է տրվում արտաքին աջակցություն, ինչն այստեղ ժխտվում է:

Իռֆֆենն նշում է, որ նույնիսկ գոյություն ունեցող իշխանության անկումի փաստից, նրա զորքերի դուրս բերումից հետո չպետք է եզրակացություն անել, որ այդ իշխանությունը ժողովրդի մեծամասնության աջակցությունը չունի: Լուսաբանելու համար նա օրինակ է բերում Իտալիայում ֆաշիստներին, ովքեր պրոլետարիատից ավելի կազմակերպված լինելով՝ իրենց կամքն են պարտադրում մեծամասնությանը և վայրագություններ անում: Այդ հանգամանքը կարող է վերագրվել և այլ վայրերի:

Ապա Իռֆֆենն նշում է, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել ոչ թե նրա համար, որ Ռուսաստանն այդ ցանկացել է, այլ նրա համար, որ տեղական պայմաններն են առաջացրել այդ, և տվյալ դեպքում Հայաստանին Ռուսաստանի ցուցաբերած օգնությունը բնական է: Ծայրամասային հանրապետությունների խորհրդայնացման մեջ շահի բացակայության ապացույց են ծառայում Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի և Վրաստանի օրինակները, որոնց հետ Ռուսաստանն այդ հանրապետությունների համար պատվավոր պայմանագրեր է կնքել⁷²: Ինչ վերաբերում է Շանթի հետ պայմանագրի չկնքմանը, ապա դրանում մեղավոր է մախկին հայկական կառավարությունը, քանի որ նրա դիրքորոշումն այնպիսին էր, որ պարզապես անհնարին էր նրա հետ պայմանավորվելը:

Իսահակյանը նշում է, որ ՌՍՖՍՀ-ն Շանթի պատվիրակության միջև պայմանագրի կնքման գործում անհաջողությունը հայկական կառավարության կողմից ընկալվել է այն իմաստով, որ Ռուսաստանը ձգտում է մինչև 1914 թ. իր սահմանների վերականգնմանը, և

որ նա հատկապես շահագրգռված է Հայաստանի տարածքով՝ քեմալական զորքերի հետ միավորման անհնարինության պատճառով:

Տեր-Վահանյանը նշում է, որ վեճն առանձին դրվագների շուրջ է, և ուշադրությունից դուրս է մնում այն հանգամանքը, որ դաշնակների հետ կոմունիստները դարավոր⁷³ վեճ ունեն: Նրա կարծիքով՝ բանակցությունների մասն մեթոդը ցանկալի արդյունքներ չի տա: Ապա նա նշում է, որ Հայաստանի դեմոկրատական կառավարության անկումն անտանտասիրական դիրքորոշման հետևանք է, որը նա որդեգրել էր ի հակադրություն այն բանի, որ հայ ժողովուրդը տրամադրված է ռուսասիրաբար, անկախ այն բանից, թե ինչ կառավարություն է Ռուսաստանում, վերջինիս նկատմամբ Հայաստանի տնտեսական շահագրգռվածության ուժով:

Անտանտի օգնությամբ Մեծ Հայաստանի վերաստեղծման կործանարար գաղափարը, Խորհրդային Ռուսաստանի հետ Հայաստանի ճակատագիրը կապելու վախը, ում կողմն էր զանգվածների ձգտումը, Հայաստանում դաշնակցական իշխանության կործանման պատճառ եղան:

Տեր-Գաբրիելյանը նշում է, որ «Դաշնակցության» համար գործնական հետևանքների առումով Հայաստանի պահպանման հարցը խնդրահարույց չի եղել: Նրանք թորքերի հետ պատերազմի մեջ ներքաշվեցին, միայն թե Հայաստանի խորհրդայնացում չլինի: Խոսքը իշխանության մասին էր, այլ ոչ թե ժողովրդի զոհերի: Առարկելով ահաբեկչության, մախոբոք կազմված ձեռքակալման ենթակա դաշնակների ցուցակների վերաբերյալ փաստարկների դեմ, նա նշում է, որ այդ ողջ ժամանակահատվածում գնդակահարվել է ընդամենը 8 հոգի, որոնցից 3-ը դաշնակ էին, իսկ մնացածը՝ անկոչ խցկված կոմունիստներ: Ինչ

72 Լիտվայի հետ հաշտության պայմանագիրը կնքվել է 1920 թ. հուլիսի 12-ին Մոսկվայում (օգոստոսի վերջին կորցրեց ուժը), Լատվիայի հետ՝ 1920 թ. օգոստոսի 11-ին Ռիգայում (բուլշևիկները որոշ հողային զիջումներ կատարեցին), Էստոնիայի հետ՝ 1920 թ. փետրվարի 2-ին Տարտուում (բուլշևիկները որոշ հողային զիջումներ կատարեցին և ցուցաբերեցին ֆինանսական օգնություն): Պայմանագրերը ՌՍՖՍՀ կողմից կնքել էր Ա. Իռֆֆեն: Վրաստանի հետ պայմանագիրը կնքվել է 1920 թ. մայիսի 7-ին Մոսկվայում: ՌՍՖՍՀ կողմից կնքել էր Լ. Կարախանը: ՌՍՖՍՀ-ն պարտավորվում էր չխառնվել Վրաստանի ներքին գործերին, ինչը չխանգարեց մի քանի ամիս անց վերջինիս բռնի խորհրդայնացմանը:

73 Փաստաթղթում այսպես է գրված:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գ Գ (Գ) Գրադի, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012
ՎԵՐ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԱՆՈՒՄ

վերաբերում է ձերբակալություններին, ապա այդ արվել է «Դաշնակցության» կողմից պատարաստվող ապստամբության մասին առկա նյութերի հիման վրա:

Նավասարդյանը խնդրում է անկեղծ լինել և չխոսել ազիտացիոն նպատակով, քանի որ ներկա խորհրդակցությունը միանգամայն այլ խնդիրներ ունի: Պատասխանելով Իռֆֆեին, Նավասարդյանը նրան հիշեցնում է, որ նա մտլորության մեջ է՝ մտածելով, որ հայկական բուրժուազիան գտնվում է իր հայրենիքում, մինչդեռ ամբողջ Հայաստանում ոչ միայն որպես ամբողջական դասակարգ բուրժուազիա չկա, այլև նրա առանձին ներկայացուցիչներ չկան: Այդ առումով, միանգամայն նշանակալից է և այն, որ հայ բնակչության հիմնական սոցիալական բազան հենց հայ գյուղացիությունն է, որն իրենից սոցիալապես ոչ ծայրահեղ շերտավորված զանգված է ներկայացնում: Դա բացատրվում է նրանով, որ Հայաստանում բնակչության շրջանում չկա և չի եղել խոշոր հողատիրություն, այլ տիրապետել է միմիայն մանր հողատիրության ձևը, և այդ պատճառով էլ հասկանալի է, որ հայ ժողովրդի սոցիալական կառուցվածքին բացարձակապես չհամապատասխանող խորհրդային կարգերը չէին կարող նրա լայն զանգվածների շրջանում ռեակցիա չառաջացնել, ինչը և հետագայում փետրվարյան ապստամբության վերածվեց: Այդ դժգոհությունն ուժեղացավ նաև նրանով, որ բնակչության և մասնավորապես «Դաշնակցություն» կուսակցության նկատմամբ հայ կոմունիստների հաստատած դաժանագույն ռեժիմի արդյունքում, «Դաշնակցության» Կենտկոմը որոշեց խորհրդային իշխանության դեմ ելույթ չունենալ, կուսակցության գրեթե բոլոր անվանի անդամները մնացին Հայաստանում, ծառայեցին խորհրդային իշխանությանը, սակայն «Դաշնակցություն» կուսակցության նկատմամբ քաղաքական ատելության մեջ հրահրված հետապնդումները պարտադրեցին նրանց բոլորին Հայաստանից փախչել: Լեռնային Հայաստանը՝ այն միակ շրջանը, որը նախկինում խորհրդային կողմն-

որոշման էր հարում, այժմ, Հայաստանի խորհրդայնացումից հետո, մարտնչում է Կարմիր զորքերի դեմ: Նավասարդյանը նշում է, որ սկսած դեռ 17-րդ դարից, հայկական դեմոկրատիան կողմնորոշվել էր դեպի Ռուսաստանը՝ որպես մեծ մշակութային տերության, որ այդ դեմոկրատիան իր կողմնորոշմանը հավատարիմ էր մնացել նաև հետագա ողջ պատմության ընթացքում, հավատարիմ մնաց պատերազմի⁷⁴ ողջ ընթացքում, երբ Ռուսաստանն էլ Անտանտի ճակատում էր, և միայն 1918 թ. հետո այդ կողմնորոշումն անտանտափրակա բնույթ սկսեց կրել միայն այն ժամանակ, երբ Հայաստանը բոլոր կողմերից հակառուսական կառավարություններով էր շրջափակված: Եզրափակելով, նա Հայաստանի առթիվ դարավոր վեճի լուծմանն օգնության ձեռք մեկնելու կոչ արեց, մինչդեռ այդ վեճը կոմունիստների կողմից չի լուծվել, և Հայաստանում կոմունիստների կիրառած մեթոդներով չի լուծվի:

Իռֆֆեն նշում է, որ երբեմն անկարգություններ են տեղի ունենում նաև Ռուսաստանում, սակայն դա բացատրվում է նրանով, որ դրանց վերացման համար կոմունիստական կուսակցության բավարար ուժեր չկան: Մտավորական հայերը Հայաստանում տեղի ունեցող անկարգությունների վերացմանն օգնելու փոխարեն արտասահման փախան, որտեղ ապստամբություն են նախապատրաստում և արևմտեվրոպական զանգվածներին լարում խորհուրդների դեմ՝ բողոքներ և այլն հրապարակելով:

Հայկական հարցի լուծումը նա տեսնում է աշխատանքի նպատակով հայ մտավորականության դեպի Հայաստան վերադարձը, և միայն այդ ուղով է հնարավոր համարում կատարվող ու կատարված սխալներից ազատումը:

Փափագյանը նշում է իշխանության նկատմամբ գոյություն ունեցող անվստահության պատճառով դեպի Հայաստան հայ մտավորականության վերադարձի անհնարինությունը, որի ռեժիմը փոփոխվում է իշխանության

74 Նկատի ունի Առաջին համաշխարհային պատերազմը:

գլուխ կազմած այս կամ այն անձի փոփոխումից: Նա խնդրում է իրեն ապացուցել, որ Հաստատանի խորհրդայնացումը հայ ժողովրդի օգտին է կատարվել: Ապա, նա հարցադրում է կատարում, թե արդյոք ցանկալի⁶ է Լեռնային Հայաստանի և Կարմիր գործերի միջև պայքարի դադարեցումը Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչներին և եթե ցանկալի է, նա զինադարի հաստատման համար կողմերին առաջարկում է իրենց կառավարությունների վրա ազդել: Այդ դեպքում, «Դաշնակցության» ներկայացուցիչները կարող են իրենց Գերագույն Մարմնի միջոցով հեռագրել ապստամբների կողմից գործողությունների դադարեցման մասին:

Իռֆֆեն նշում է, որ ցանկացած վարչակարգ, այդ թվում և խորհրդայինը, կարող է հավասարապես վտանգավոր և օգտակար լինել: Ինչ վերաբերում է զինադարին, ապա չի կարելի ներկա խորհրդակցության իրավասության շրջանակներից դուրս եկող հարցեր քննարկել և լուծել: Լեռնային Հայաստանի ելույթը Հայաստանի խորհրդային կառավարության կողմից որպես խռովություն է դիտարկվում, և ապստամբների հետ զինադար կնքելը պետական շահերին հակասում է:

Նավասարդյանը նշում է, որ Հայաստանի խորհրդային կառավարությունը Լեռնային Հայաստան խաղաղության պատվիրակության⁷⁵ ուղարկման փաստով վերջինիս որպես ինքնուրույն պետություն է ճանաչել և դրա համար էլ չի կարելի մոլոր պատերազմը որպես խռովություն դիտարկել:

Փափագյանը նշում է, որ «Դաշնակցության» ներկայացուցիչները զինադարի առաջարկությունն առանց հետին մտքերի են արել, քանի որ եթե քաղաքացիական պատերազմը պետք է շարունակվի, Հայաստանում հայ չի մնա, որոնց կեն արդեն կոտորված է թուրքերի կողմից:

Այս հարցի հետագա քննարկումը տեղափոխվում է հաջորդ նիստ:

Նիստը փակվում է երեկոյան ժամը 7^{1/2}-ը:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 192, թթ. 1-8:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 14

ԱՐՁԱՆԱԿՐՈՒԹՅՈՒՆ N. 5

Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի և «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչների նիստի Իռֆֆեի նախագահությամբ Ռ-իգա, 1921թ. հուլիսի 13

Ներկա են՝

Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի կողմից – ընկերներ Ա. Իռֆֆե, Տեր-Գաբրիելյան, Տեր-Վահանյան:
ՀՅ «Դաշնակցության» կողմից – ընկերներ Վ. Փափագյան, Վ. Նավասարդյան, Ա.

Իսահակյան:

Քարտուղար Ֆրեյման:

Նիստը բացվում է երեկոյան ժամը 9-ին:

Բացելով նիստը, Իռֆֆեն հրապարակում է «Դաշնակցության» ներկայացուցիչների ներկայացրած վերամշակված նախագիծը, որը վերնագրված է «Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Գերագույն Մարմնի առաջարկություն» (Հավելված N 2): Այն կարծիքների որոշ փոխանակումից հետո կողմերն ընդունեցին:

Ընդունված առաջարկությունը որոշվեց չստորագրել, այլ միայն նշագրման համար նախաստորագրել, ըստ որի այն ընդունված է սկզբունքորեն, և այսուհետ մինչև երկու կուսակցությունների Կենտրոնական մարմինների կողմից պատասխանի ստացումը՝ պարտադիր բնույթ չի կրում: Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչներից դրական պատասխանի ստացումից հետո կհետևի «Ռ-Կ(բ)Կ Կենտկոմի պատվիրակության պատասխանը Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակության առաջարկությանը» վերնագրված պատասխանը (Հավելված N 3):

Հայաստանում կոմունիստական և «Դաշնակցություն» կուսակցությունների փոխհարաբերությունների հարցի առթիվ վեր-

75 հոսքը Արտաշես Կարինյանի գլխավորած պատվիրակության մասին է:

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ, 2012
Գ- (Ժ) քաղթ, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012
ԿԵԿ համահայկական հանդես

ջինիս ներկայացուցիչները հրապարակում են իրենց «Առաջարկություն N 2» նախագիծը (Հավելված N 4):

Այդ առաջարկության առթիվ կարծիքների փոխանակումից և Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչների ցուցումներից հետո առաջարկության մեջ դիտարկվում են հայկական կառավարության ներքին քաղաքականության հարցերը: Այդ առթիվ Հ.Կ Կենտկոմի որոշումը և վերաբերմունքն է պահանջվում, և լավագույն դեպքում՝ Ռ.Կ(բ)Կ Կենտկոմը երկու հայկական քաղաքական կուսակցությունների փոխհարաբերությունների կարգավորման ուղղությամբ՝ նրանց համատեղ աշխատանքի նպատակով, միայն միջնորդություն կարող է ստանձնել: «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչները համաձայնեցին հետ վերցնել իրենց նախագիծը, կանգ առնելով «Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի պատվիրակության հայտարարություն» տեսքով (Հավելված N 5) շարադրված միջնորդության ձևի վրա:

Նիստի վերջում Իսահակյանը հրապարակում է «Դաշնակցության» Կենտկոմի ներկայացուցիչներին Լեռնային Հայաստանից հղած հեռագիրը, որտեղ նրանց հաղորդում էին երկու խորհրդային գնդերի՝ լեռնականների կողմն անցնելու և վերջիններիս կողմից Բաշնորաշենի գրավման մասին: Յանկանալով դադարեցնել հետագա արյունահեղությունը, «Դաշնակցության» ներկայացուցիչները խնդրում են Մոսկվային հեռագիր փոխանցել՝ զինադադարի մասին խնդրանքով:

Իռֆֆեն խոստանում է բանակցությունների ավարտի մասին կից գրությամբ հեռագիրը փոխանցել Մոսկվա և հաղորդել, որ բոլոր սկզբունքային հարցերի շուրջ համաձայնություն է ձեռք բերվել:

Նիստը փակվում է երեկոյան ժամը 11-ին:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 193, քթ. 1-2:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 15

Ա. ԻՌՅՅԵՏԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՄՈԼՈՏՈՎԻՆ ԵՎ Գ. ՉԻՉԵՐԻՆԻՆ

Ռ.Կ(բ)Կ Կենտկոմ, ընկ. Մոլոտովին
ԱԳԺԿ, ընկ. Չիչերինին

Հարգելի ընկերներ,

Չնայած այն բանին, որ ես, առաջարկություն ստանալով ստանձնել Դաշնակցության հետ բանակցությունները, գրավոր ու հեռագրով խնդրել եմ Կենտկոմին հրահանգներ և ցուցումներ տալ, սակայն ոչ մի նման բան չեմ ստացել: Ընկերներ Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը նույնպես բացարձակապես ոչ մի հրահանգ չեն բերել:

Դրա համար էլ, համատեղ քննարկելով բանակցությունների մեթոդի մասին հարցը, մենք որոշել ենք այն այնպես վարել, որպեսզի ինչքան հնարավոր է շատ բան դուրս կորզել մեր կոնտր-ազենությունից, միևնույն ժամանակ հույս չդնելով որևէ համաձայնության հնարավորության վրա:

Սակայն, բանակցությունների ընթացքում պարզվեց, որ Դաշնակցության հետ համաձայնությունը, առաջին, բավականին նպատակահարմար է, և երկրորդ, հեշտ հասանելի: Դրա համար էլ, վերջ ի վերջո, այդպիսի համաձայնության մոտուս մշակեցինք, և հարցը բաց թողնելով մինչև Չեր որոշման ստացումը՝ ուղարկում ենք մշակված փաստաթղթերը, որոնք առայժմ ոչ մի բանով պարտավորված չեն և բոլոր դիմումները կատարվել են միայն անձամբ սեփական անունից⁷⁶:

Ինձ թվում է, որ մեր մշակած համաձայնությունը՝ և՛ ձևականորեն և՛ ըստ էության, միանգամայն նպատակահարմար է, և Չեր կողմից պետք է ընդունվի, և քանի որ ես անձամբ Կենտկոմի կամ Կառավարության հետ դեռևս անհամաձայնության դեպք չեմ ունեցել, նույնիսկ իմ անունից կատարված դիմումներով, դրա համար էլ ներկա զեկուցագրով ցանկանում եմ Չեզ մանրամասն ներկայացնել ինչպես մեր տպավորությունները:

⁷⁶ Բառերի տակ ընդգծումները փաստաթղթին են:

րը, այնպես էլ՝ մեզ մոտ ձևավորված քաղաքական գնահատականը և տվյալ իրավիճակը, մասնավորապես այն հույսով, որ այդ ժամանակ Դուք մեզ հետ կհամաձայնեք: Իհարկե, լավ կլիներ, եթե ես բանավոր զեկույցի համար կարողանայի գալ, բայց դա անհնար է, և անհրաժեշտության դեպքում մեզնից զեկույց կներկայացնեն ընկերներ Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը:

Նախ և առաջ տպավորությունների մասին: Ես առաջին անգամ չէ, որ բանակցում եմ Դաշնակների հետ (Բեռլինում ես նույնպես նրանց հետ զրուցել եմ) և երկրորդ անգամ ես տպավորություն եմ ստանում, որ այսպես կոչված սոցիալիստական ճամբարի մեր բոլոր հակառակորդներից դաշնակներն ամենից համոզվող և ամենից համբերատարն են: Նրանց մոտ, ըստ երևույթին, տնտեսական և տեսաքաղաքական հարցերում սեփական դիրքորոշում չկա. Հայաստանի և հայ ժողովրդի գոյատևման հարցը նրանց համար գերակշռում է բոլոր հարցերի նկատմամբ, և խորհրդային վարչակարգը որպես այդպիսին, պրոլետարական հեղափոխությունը որպես այդպիսին, վերջապես՝ նույնիսկ կոմունիստական ծրագիրն ըստ էության, նրանց քիչ է հետաքրքրում և առավել ևս՝ վաճում մեզմից, քան քաղքենիական ճամբարից բոլոր մյուս այսպես կոչված սոցիալիստներին և հեղափոխականներին:

Մյուս կողմից, ակնհայտ է, որ Հայաստանի ճակատագիրը նրանց համար այնքան է կարևոր, որ այդ հարցի առթիվ համաձայնության անհնարինության դեպքում նրանք ցանկացած արկածախնդրության պատրաստ են: Ես արդեն չեմ էլ խոսում այն մասին, որ այդ դեպքում նրանք վրացական մենշևիկների մեծ ամբողջ աշխարհով մեր դեմ ագիտացիա կվարեն (ինչը միջազգային-պրոլետարական շրջանակներում հայկական հարցի ավանդական ժողովրդականության, նրանց արտասահմանյան կազմակերպությունների

ուժեղ համախմբվածության և հարստության դեպքում, որոնք կան ամենուրեք, ավելի մեծ չարիք կլինեն, քան թե Չխեիձեի⁷⁷, Ժորդանիայի⁷⁸, Չխենկելի⁷⁹ և այլոց արտասահմանյան հյուրախաղերը), սակայն ինձ թվում է, որ իրենց նշանակալից արկածախնդրությամբ նրանք իրականում մեր արտասահմանյան ներկայացուցիչների և Ռուսաստանում առաջնորդների նկատմամբ պատրաստ են անաբեկչության դիմել:

Դրա հետ միասին տպավորություն է ստեղծվում, որ Հայաստանում խորհրդային իշխանության մեկ տարին նրանց համար իզուր չի անցել, ինչպես իզուր չի անցել մինչ այժմ ՌՍՖՍՀ գոյությունը և վերջինիս աճող ուժը, իսկ քանի որ միևնույն ժամանակ նրանք բուրժուական տերությունների օգնության և աջակցության հնարավորությունից խիստ հիասթափվել են, և ինձ թվում է, որ նրանք անկեղծորեն և ազնվորեն պատրաստ են Հայաստանում Խորհրդային իշխանության հետ համագործակցել, և նորից վերադարձել են դեպի Ռուսաստան իրենց կողմնորոշումը:

Ժամանակին նրանց առաջնորդները Գերմանիայում, բախելով այնտեղ բոլոր դռները, ասել են ինձ, որ եթե Ռուսաստանը «չհեռանար» Հայաստանից, նրանք մասկինի պես ոչ մեկի օգնությունը չէին փնտրի և կկողմնորոշվեին միայն մեզ վրա: Տպավորություն է ստեղծվում, որ «մեծ տերությունների» ընդունարաններում բավականաչափ թրև գալով, նրանք այժմ, երբ Ռուսաստանը կրկին «եկել է» Հայաստան, պատրաստ են մոռանալ իրենց հին վեճերը և միայն մեզմից են օգնություն ու փրկություն սպասում:

Կասկած չկա, որ առաջին՝ նրանց մոտ անտանոյան առաջնորդների հետ ամեն տեսակի բանակցություններ են եղել, և երկրորդ՝ քեմալականների հետ: Նրանք իրենք էլ դա չեն ժխտում, ընդ որում հաստատելով, որ դրանք եղել են միայն առանձին պետական գործիչներ-

77 Չխեիձե Նիկոլայ Սեմյոնի (1864-1926) – Անդրկովկասի Սեյմի նախագահ (1918), Փարիզի խաղաղության համաժողովում Վրաստանի ներկայացուցիչ:

78 Ժորդանիա Նոյ Նիկոլայի (1869-1953) – եղել է Վրաստանի խորհրդարանի նախագահ:

79 Չխենկելի Ակակի Իվանի (1874-1959) – Անդրկովկասի Հանրապետության վարչապետ (1918), Վրաստանի արտգործնախարար (1918), դեսպան Ֆրանսիայում (1921-1933):

րի հետ՝ որպես մասնավոր անձանց, ոչ պաշտոնական գրույցներ:

Նույնպես կասկած չկա, որ ընդհանրապես մեր արտաքին քաղաքականության և հատկապես արևելյան քաղաքականության վերաբերյալ նրանց մոտ բացարձակապես խեղաթյուրված պատկերացում է ստեղծվել, և վստահություն կա, որ մեր ակտիվ մասնակցության պայմանով Հայաստանի ապախորհրդայնացումը միայն կարող է լուծել Հայկական հարցը:

Նրանք այսպես էին դատում. Հայկական հարցը լուծվում է երկու պայմաններում՝ 1. Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյության դեպքում, 2. Ռուսական Հայաստանին որոշ թուրքական տարածքների միավորման պայմանով: Այժմ խոսք չի կարող գնալ «Մեծ Հայաստանի» մասին, այլ այն տարածքների, որ նույնիսկ փոքր են, քան «Վիլսոնի գծի»⁸⁰ տարածքները, որ ըստ երևույթին քեմալականները նույնպես պատրաստ են տալու նրանց (ընկերներ Տեր-Ղաբրիելյանը և Տեր-Վահանյանը կմատնանշեն այն կցվող քարտեզի վրա) (տե՛ս Հավելված N 1)⁸¹:

Նրանք կարծում են, որ Խորհրդային Հայաստանն անկախ չէ, այլ փաստացի ՌՍՖՍՀ մասն է: Հայկական հարցը վարդուց արդեն դարձել է միջազգային, քանի որ տերությունների մեծ մասը և ողջ համաշխարհային պրոլետարիատն իրենց կոնգրեսներում այդ խնդրի առթիվ մի շարք պարտավորություններ են ստանձնել: Խորհրդային Հայաստանի գոյությունը վանում է նրանից ողջ բուրժուական աշխարհը, և թեպետ հայկական հարցի լուծումը վերոնշյալ իմաստով բացարձակապես անհնար է առանց Ռուսաստանի, միմիայն Ռուսաստանի ուժերից էլ այն վեր է: Այստեղից՝ ապախորհրդայնացման անհրաժեշտությունը:

Դրանից բացի, թուրքերը, անգամ քեմալականները, իհարկե, ի դեմս Ռուսաստանի, տեսնում են իրենց ավանդական թշնամուն և

եթե պատրաստ են տարածքային զիջումների գնալ Հայաստանին (ըստ երևույթին նրանք դա նրանց իրականում խոստացել են), ապա միայն պայմանով, եթե այդ զիջումները չեն մտնեցնում, այլ հեռացնում են Թուրքիային Ռուսաստանից: Թուրքերը կարող են Հայաստանին հանգիստ սրտով զիջել այն տարածքները, որոնց մասին խոսք է գնում, քանի որ այժմ այդ տարածքները բնակեցված են քրդերով, ովքեր Թուրքիայի նկատմամբ նույնպես թշնամական են տրամադրված, և վերջինիս համար առավել ձեռնառու է այդ տարածքները տեսնել կուլտուրական Հայկական հանրապետության սահմաններում, որը Թուրքիայի համար ձեռնառու պայմանագիր⁸² կնքող և դրան հավատարիմ կողմ է, քան վայրի քրդերի իշխանության ներքո, որոնց հետ ոչ մի պայմանագրային հարաբերություններ հնարավոր չեն: Սակայն, իհարկե, այդ ամենը ձեռնառու է Թուրքիային՝ պայմանով, որ դա Հայաստանը կլինի, այլ ոչ թե Ռուսաստանը՝ կեղծանունի ներքո:

Այսպիսով, դաշնակները Թուրքիայի և Ռուսաստանի միջև հայկական բուֆերի գաղափարին են հանգում: Կասկած չկա, որ այդ գաղափարը նրանց հուշվել է Անտանտի կողմից, որն Արևելքում այն է ցանկանում, ինչ և Արևմուտքում, իսկ գուցե նաև քեմալականների կողմից, ովքեր, անկասկած, ինչպես ցանկացած թուրքի պարագայում՝ երկակի քաղաքականություն վարող են:

Մեր այն առարկությունները, որ թեպետ ՌՍՖՍՀ-ն ամենևին էլ Խորհրդային Հայաստանի կարիքը չունի, և չի կարող համաձայնել նրա ապախորհրդայնացմանն այլ բնույթի պատճառներով, ու նախ և առաջ այն պատճառով, որ որևէ խորհրդային պետության կամավոր ապախորհրդայնացումը խնդրի առջև է կանգնեցնում ՌՍՖՍՀ-ին: Մեր առարկությունները, որ Խորհրդային Հայաստան բուրդովին չի նշանակում կախյալ Հայաստան, քանի որ նաև Խորհրդայինն է բացարձակա-

80 Նկատի ունի ըստ Սևրի պայմանագրի ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի կողմից հայ-թուրքական սահմանագծի որոշումը 1920 թ. նոյեմբերի 22-ին:

81 Քարտեզը գործում բացակայում է:

82 Նկատի ունի Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

պես անկախ մնում, սակայն՝ միայն ՌՍՖՖՀ-ին բարեկամական: Վերջապես, մեր առարկությունները, որ տվյալ իրավիճակում Ռուսաստանի և նրա բուրժուական հարևանների միջև ցանկացած բուֆեր կարող է գոյատևել միայն կամ որպես խորհրդային, կամ որպես հակախորհրդային, և որ Հայաստանի ապախորհրդայնացման դեպքում վերջինս անխուսափելիորեն կներառվի Ռուսաստանին թշնամական պայքարի մեջ, ինչը ձեռնտու չէ նրա համար. 1. Քանի որ նա նման պայքարում կարող է կործանվել, 2. Քանի որ և հենց դաշնակների կարծիքով՝ Հայկական խնդիրը չի կարող լուծվել առանց Ռուսաստանի, հետևաբար առավել ևս չի կարող լուծվել Ռուսաստանի դեմ: Մեր բոլոր այդ առարկությունները հանգեցրին այն բանին, որ դաշնակները ապախորհրդայնացման մասին այժմ չեն խոսում, թեպետ և շարունակում են պնդել, որ իրենց տեղեկություններով՝ քեմալականները չեն համաձայնի թուրքական տարածքների խորհրդային Հայաստանին միացնելուն, և հարկ կլինի փաստացի թողնել իշխանությունը մեր ձեռքում, արտաքինապես ստեղծել որևէ կեղծամուս խորհրդային Հայաստանի համար՝ Հեռավոր-Արևելյան Հանրապետության նմանությամբ:

Բանակցությունների արդյունքում դաշնակներին միանգամայն բավարարում է իմ կողմից ձևակերպած նրանց առաջարկությունը մեզ (տե՛ս Հավելված N 2) և մեր պատասխանը (տե՛ս Հավելված N 3), որտեղ մենք, ըստ էության, արտահայտում ենք միայն այն, ինչ խոսում ենք միշտ: Մենք մշտապես հաստատում ենք, որ խորհրդային հանրապետությունները, ՌՍՖՖՀ կազմի մեջ չմտնող, բացարձակապես անկախ, ինքնուրույն և սուվերեն պետություններ են: Խաղաղ բանակցությունների ընթացքում, երբ մեր հակառակորդները փորձում են դա կասկածի տակ դնել, ես միշտ այդ ճշմարտությունը դեկլարատիվ կրկնում եմ: Այստեղ նույնպես մենք ոչ մի այլ բան չենք ասում կետ 1-ում: Ինչ վերաբերում է կետ 2-ին, ապա դեռևս

Բրեստի⁸³ ժամանակից սկսած, մենք միշտ հենց այդպես ենք հասկացել հայկական հարցի լուծումը և միշտ պնդել ենք, որ բոլոր փախստականները և քշվածները պետք է վերադարձվեն իրենց վայրերը, քանզի հակառակ դեպքում չկա ժողովրդի իրական ինքնորոշում:

Ճիշտ է, կարող է առարկեն, որ մենք դրանով սպառնում ենք քեմալականների հետ մեր հարաբերությունները փչացնել, քանի որ նրանց տարածքների նկատմամբ ոսնձգության փորձ ենք կատարում, սակայն՝ 1. մենք ոսնձգության փորձ ենք կատարում ոչ թե մեր, այլ անկախ Հայաստանի համար, 2. ես ամձամբ հետևյալ նկատառումներով նման առարկությունը սխալ կհամարեի:

Ես միշտ նշում եմ, որ մեր արտաքին քաղաքականությունը կաղում է ավելորդ իմպրեսիոնիզմով, որը մասնավորապես արտահայտվում է այն բանում, որ երբ մենք ձգտում ենք, մեր շահերից ելնելով, որևէ պետության աջակցել կամ էլ նրա հետ լավ հարաբերություններ պահպանել, մենք այդ նպատակը հետապնդելով՝ մնացածի մասին մոռանում ենք: Ես միշտ պնդում եմ, որ այժմ, երբ մեր ներքին քաղաքականությունը համաշխարհային հեղափոխության ուղացման կանխատեսման վրա է կառուցվում⁸⁴, մեզ մեր արտաքին քաղաքականության մեջ հարկավոր է լինում հաշվի նստել այդ հանգամանքի հետ, այսինքն՝ միշտ հարկավոր է կարողանալ գնահատել այն տեսակարար կշիռը, որը մենք ունենք համաշխարհային ասպարեզում և այսպես կոչված միջազգային կոնցերտում մի լիճակի լինել ավելի ակտիվ հանդես գալ:

Քանզի, ինչքան առավել դանդաղի համաշխարհային պրոլետարական հեղափոխության ընթացքը, այնքան մենք ավելի կարևոր գործոն ենք հանդիսանում բուրժուական պետությունների՝ խորհրդայինի հետ կոոպերացիայի ժամանակահատվածում: Այդ տեսանկյունից ես միշտ դատապարտել եմ մեր չափից դուրս մեղմ քաղաքականությունը. օրինակ՝ Լիտվայի նկատմամբ, ում, ըստ իս, ոչինչ

83 Նկատի ունի 1918 թ. մարտի 3-ի Բրեստի պայմանագիրը:

84 Այս խոսքերն ընդգծված են Վ. Լենինի կողմից և դրված է «?» նշանը:

հենց այնպես տալ չի կարելի, հիշելով այն մասին, որ նա, ինչպես և բոլորը, խաղում են երկու ճակատով, բայց առանց մեզ յուր գնալ բոլորովին չեն կարող:

Քեմալը նույնպես, անկասկած, խաղում է մի քանի ճակատով և մենք նրան շատ ենք պետք: Եվ պետք ենք մենք նրան ոչ միայն նրա համար, որ ցուցաբերում ենք նյութական օգնություն, այլև գլխավորապես մեր՝ ի տես մեր քարոչական նշանակության. Թուրքիայի աշխատավոր զանգվածները, ինչպես և ամենուրեք, մեր կողմն են, և Քեմալի ընկերակցությունը մեզ հետ բարձրացնում է նրա հեղինակությունը այդ զանգվածների աչքին: Եհիշտ է, Թուրքիայում այդ զանգվածները ոչ այնքան տարածված են, որպեսզի մենք կարողանալինք հենվել նրանց վրա Քեմալի, այսինքն՝ ազնվական-կալվածատիրական խմբավորման դեմ, բայց նաև Քեմալը չի կարող իր աշխատավորների դեմ գնալ, այսինքն՝ մեր դեմ: Մեր կողմից հայերի՝ որպես առավելագույնս ճնշված ժողովրդի, շահերի հետևողական պաշտպանությունը բարձրացնում է վստահությունը մեր նկատմամբ նաև մահմեդական ժողովրդական զանգվածների շրջանում, ովքեր ճնշված են նույնիսկ Թուրքիայում, ինչպես նաև առավելապես Արևելքի մյուս պետություններում, մեզ մոտ՝ Թուրքեստանում, Աֆղանստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում: Դրա համար էլ 2-րդ կետի պատճառով Քեմալի հետ հարաբերությունների վատթարացումից ստիպված չենք լինի վախենալ: Վերջապես, 2-րդ կետը, ինչպես և 3-րդը, պետք է խելամոռեն իրականացվեն:

Եթե մենք դաշնակների հետ քեմալականների բանակցություններին և վերջիններիս խոստումներին հղում անելով (իսկ դրա դեմ դաշնակները ոչ մի առարկություն չունեն), առաջարկենք Քեմալին բանակցել ՀԽՍՀ կառավարության հետ՝ մեր միջնորդությամբ, ապա այդ պատճառով Քեմալը մեզ հետ կպակեր չի խզի, իսկ բանակցությունները կարող են ձգձգվել այնքան, որքան մեզ անհրաժեշտ է: Այդ նույն ժամանակ դաշնակների ընտելաց-

ման բոլոր հնարավոր օգուտները կպահպանվեն:

Ի՞նչ օգուտներ են դրանք: Ես ենթադրում եմ, որ հայկական հարցը Եվրոպայի ու Ամերիկայի պրոլետարական զանգվածների շրջանում իսկապես հանրաճանաչ է: Երբ Եվրոպայում այժմ շրջագայում են վրացական մենշևիկները և թաթարական մուսավաթականները «մեր կայսերապաշտության» ու Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ «բռնության» համար մեր դեմ ազիտացիայով, երբ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի պաշտոնաթող կառավարությունները արտասահմանում մեր դեմ միություն են կնքում (ինչպես եղավ վերջերս) և երբ նրանց պաշտպանում են բոլոր կարգի և երանգի արտասահմանյան սոցիալ-դավաճանները, ապա մեզ ամենևին ձեռնտու չէ, որպեսզի այդ ամբողջ վայնասունին միանան հայկական դաշնակների ձայները և ս, որոնք ավելի եռանդուն են, քան մյուսները, և իրականում կարող են ահաբեկչության դիմել հանուն իրենց վրա ուշադրություն գրավելու: Եվ հակառակը, մեզ շատ ձեռնտու է, եթե հայերը դուրս գան Կովկասյան սպիտակզավարդիական միությունից և ամենուրեք ազիտացիա կվարեն մեր օգտին: Հայաստանը առավել տառապող երկիրն է և առավել համակրանք է իր վրա գրավում, դրա համար էլ արտասահմանում մեր օգտին հայերի աշխատանքը կչեզոքացնի բոլոր Ժողովուրդների աշխատանքը մեր դեմ: Մենք էլ հասնում ենք դրան շատ փոքր գնով, մեր մշտապես ասած խոսքերի կրկնությամբ:

Դրանից զատ, այդ համաձայնության արդյունքում Հայաստանը ստանում է հայ մտավոր աշխատողների որոշակի խմբաքանակ, որի խիստ կարիքը նա ունի: Ուշադրության առնելով մեր ընկերների այդքան հաճախակի ինքնագաղթի լինելը՝ մենք ոչինչ չենք կորցնում, եթե դաշնակների հետ Համաձայնության արդյունքում (տես Հավելված N 4)⁸⁵ Հայաստանում ինքնագաղթությունը մի քիչ կրճատվի: Չէ՞ որ ընկ. Լեհինն անհրաժեշտ

85 Գործում բացակայում է:

գտավ ընկ. Մյասնիկովին փաստաթուղթ⁸⁶ տալ, որտեղ ըստ էության նախագուշացնում էր ինքնագուշակ լինելու դեմ: (Ի դեպ, դաշնակները այդ փաստաթղթից շատ գոհ են)⁸⁷:

Եթե նույնիսկ ենթադրենք, որ դաշնակների հետ դաշինքը, այդ կուսակցության քաղքենիական բնույթի շնորհիվ, կդառնա ոչ այնքան երկարատև, ինչպես մեր դաշինքը ձախ սոցիալիստ-հեղափոխականների հետ, ապա ամեն դեպքում ներկա բոլոր շահերը մնում են: Հայ ժողովրդի վստահությունը կմնա միշտ մեր կողմում, Հայաստանում քաղաքացիական պատերազմին վերջ կտրվի, Խորհրդային Հայաստանին կմիավորվեն Չանգեզուրը և Ղարաբաղը, մեր հեղինակությունը որպես փոքր ու ճնշված ժողովուրդների պաշտպանի, կբարձրանա ողջ աշխարհում և կովկասյան հարցերի շուրջ մեր դեմ ագիտացիան կկաթվածահարվի, միևնույն ժամանակ մենք դաս կտանք Քեմալին,⁸⁸ ապացուցելով նրան, որ մեր թիկունքում իր քաղաքականություն վարելն անհնարին է, և մենք մեզ նկատմամբ թշնամական վերաբերմունքի դեպքում ամենևին մտադիր չենք օգնություն ցույց տալ:

Ահա թե ինչու մենք բոլորս, բանակցություններ վարողներս, համաձայնեցինք նախաստորագրել կցվող փաստաթղթերը, այսինքն՝ ցույց տալ, որ մենք անձամբ դրա ստորագրման կողմ ենք, և ահա թե ինչու ես խստորեն և վճռականորեն խորհուրդ եմ տալիս Ձեզ համաձայնել մեզ հետ և թույլատրել մեզ ստորագրել այդ փաստաթղթերը:

Արտաքննապես գործի վիճակն այսպիսին է. պարտադիր ուժ ունեցող ոչ մի որոշում չի ընդունվել: Ընկերներ Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը զեկույցի համար գալիս են Մոսկվա: Մեզ հետ Կենտկոմի համաձայնության դեպքում նրանք այնտեղ կստորագրեն փաստաթղթերը և կուղարկեն ինձ, ես էլ կստորագրեմ իմ կողմից և փաստաթղթերը կփոխա-

86 Խոսքը Կովկասի կոմունիստներին ուղղված Լենինի մամակի մասին է, որտեղ ճարահատյալ ընդունվում էր բռնի կերպով նոր խորհրդայնացված հանրապետություններում համեմատաբար ավելի մեղմ քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը:

87 Այս արտահայտությունն ընդգծել է Վ. Լենինը և կողքը նշել. «Այ քեզ փաստարկ»:

88 Այս խոսքերն ընդգծված են Վ. Լենինի կողմից, և դրված է «!!!» նշանը:

89 Փաստաթղթի վրա կան շտամպներ. 1. «Յամկ/բ/Կ Կենտկոմի գաղտնի արխիվ», 2. «ԲԲ N. 53 արձանագր., կետ 13», 3. «Գործ N. 17/0, 41 դաշնակներ»:

նակեմ դաշնակների հետ, ովքեր այստեղ ՌԿ(բ)Կ Կենտկոմի պատասխանին են սպասում:

Քանի որ դաշնակները երկար չեն կարող սպասել, և ես էլ մտածում եմ աշխատանքի վերադառնալ Ռուսաստան, ապա Կենտկոմի որոշումը այդ հարցի առթիվ պետք է հետևի հնարավորինս շուտ:

Եվս երկու խոսք: Գաշնակները ցանկանում էին, որպեսզի մշակվի համաձայնություն: Ես դրան դեմ գնացի, մատնանշելով այստեղ կողմերի բացակայությունը, և առաջարկեցի դաշնակցական առաջարկի ընդունված ձևաչափը և մեր պատասխանը: Իսկ ներհայկական հարցում մենք ոչինչ՝ բացի միջնորդությունից, ըստ իս, մեզ վրա չենք կարող ստանձնել:

Կոմունիստական ողջույնով՝
Ա. Իռֆֆե (ստորագրություն)

Ռիգա, Բիրլերիլինդստոֆ
14 հուլիսի 1921թ.
N. 1

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 22-29:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 16
ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՀՅԳ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԵՐՄՆԻ ՊՏԱՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ⁸⁹

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայ Յեղափոխական «Գաշնակություն» Կուսակցության Գերագույն մարմնի պատվիրակության

Հայ Յեղափոխական «Գաշնակություն» Կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակները ՌԿ(բ)Կ Կենտկոմի պատվիրակների

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՄԱՆԻԿ

Գ (Ժ) քարտի, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ԿԵԼ համահայկական հանդես

հետ բանակցություններից հետո հայտարարում են, որ Հայ Ժողովրդի ֆիզիկական գոյության երաշխավորման և նրա ազատ ու անկախ քաղաքական կեցության երաշխավորման նպատակներով, անհրաժեշտ է.

1. Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյությունը, որը այլ պետությունների հետ, այդ թվում և ՌՍՖՍՀ, իր բոլոր հարաբերություններում կպահպանի իր լիարժեք սուվերենիտետը:

2. Այսպես կոչված Ռուսական Հայաստանի տարածքային միավորումն այսպես կոչված Թուրքական Հայաստանի հետ, այսինքն՝ Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատ գոյության համար բավարար և նախկինում հայերով բնակեցված թուրքական տարածքների միացումն առաջինին:

3. 2-րդ կետում նշվածի իրականացմանը ՌՍՖՍՀ նախաձեռնության և աջակցության անհրաժեշտությունը: Հայաստանի կառավարությանը, որ կյանքում իրականացնելու էր կետեր 1-ինի և 2-րդի նշված դրույթները, Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» Կուսակցությունը խոստանում է իր լիարժեք աջակցությունը և ուժերի ներածին չափով օգնությունը, մասնավորապես նա պարտավորվում է.

Ա. Ինչպես հայրենիքում, այնպես էլ նրանից դուրս հայ ժողովրդի շրջանում ազիտացիա տանել Հայաստանի կառավարության շուրջ, որը կյանքում իրականացնում է նշյալ կետեր 1-ինի և 2-րդի դրույթները, նրա միավորման նպատակներով:

Բ. Ըստ ամենայնի աջակցել վերոնշյալ մտքով հայկական հարցի լուծման գործում ՌՍՖՍՀ նախաձեռնությանը Եվրոպական Տերություններից օգնության և աջակցության ստացմանը:

Գ. Իր կողմից ուժերի ներածին չափով ազդել Թուրքիայի վրա՝ Ռուսական Հայաստանին վերոնշյալ իմաստով բավարար չափի Թուրքական Հայաստանի տարածքների միավորման հարցում նրա համաձայնության ստացման նպատակով:

Վ. Փ.
Ա. Ի.

Վ. Ն.
[բոլորը ձեռագրով]
Ռ-իգա, Բիլդերլինդստիֆ
14 հուլիսի 1921 թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 33, 34; գ. 194, թ. 3: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 17
ՀԱՎԵԼՎԱԾ Ն 3

ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՊԱՏԱՍԽԱՆ

Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» Կուսակցության Գերագույն Մարմնի Պատվիրակության առաջարկությանը

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի պատվիրակները Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» Կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակների հետ բանակցություններից հետո հայտարարում են, որ Հայ Ժողովրդի ֆիզիկական գոյության երաշխավորման և նրա ազատ ու անկախ քաղաքական կեցության երաշխավորման նպատակներով, անհրաժեշտ է.

1. Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյությունը, որը այլ պետությունների հետ, այդ թվում և ՌՍՖՍՀ, իր բոլոր հարաբերություններում կպահպանի իր լիարժեք սուվերենիտետը:

2. Այսպես կոչված Ռուսական Հայաստանի տարածքային միավորումն այսպես կոչված Թուրքական Հայաստանի հետ, այսինքն՝ Հայաստանի տնտեսական և քաղաքական ազատ գոյության համար բավարար և նախկինում հայերով բնակեցված թուրքական տարածքների միացումն առաջինին:

3. ՌԿ(Բ)Կ Կենտկոմը պարտավորություն է ստանձնում ազդել ՌՍՖՍՀ Կառավարության վրա 2-րդ կետում նշվածի իրականացմանը նախաձեռնություն և աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության ուղղությամբ: ՌԿ(Բ)Կ Կենտկոմն ի գիտություն է ընդունում ՀՅ

«Դաշնակցության» հայտարարությունը, որ Հայաստանի կառավարությանը, որ կյանքում իրականացնելու է կետեր 1-ինի և 2-րդի նշված դրույթները, խոստանում է իր լիարժեք աջակցությունը և ուժերի ներածին չափով օգնությունը, մասնավորապես նա պարտավորվում է:

Ա. Ինչպես հայրենիքում, այնպես էլ նրանից դուրս հայ ժողովրդի շրջանում ազիտացիա տանել Հայաստանի կառավարության շուրջ, որը կյանքում իրականացնում է ճշյալ կետեր 1-ինի և 2-րդի դրույթները, նրա միավորման նպատակով:

Բ. Ըստ ամենայնի աջակցել վերոնշյալ մտքով հայկական հարցի լուծման գործում ՌՍՖՆՆ-ի նախաձեռնությանը Եվրոպական Տեղություններից օգնության և աջակցության ստացմանը:

Գ. Իր կողմից ուժերի ներածին չափով ազդել Թուրքիայի վրա՝ Ռուսական Հայաստանին վերոնշյալ իմաստով բավարար չափի Թուրքական Հայաստանի տարածքների միավորման հարցում նրա համաձայնության ստացման նպատակով:

Ռիգա, Բիլդերլինդստոֆ
14 հուլիսի 1921 թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 35, 36-37; գ. 194, թ. 4: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 18

ՀԱՎԵԼՎԱԾ N 5

**ՌԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՍԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի պատվիրակության

Հաշվի առնելով հիմնական սկզբունքային-քաղաքական հարցերում ՌԿ(Բ)Կ Կենտկոմի և ՀՅ «Դաշնակցության» Գերագույն Մարմնի համաձայնությունը և Հայաստանի կառավարությանը լիարժեք 90 Փաստաթղթի վրա կա շտամպ «Ստուգված է»:

աջակցություն և ուժերի ներածին չափով օգնություն ցուցաբերելու ՀՅ «Դաշնակցության» պարտավորվածությունը, ՌԿ(Բ)Կ Կենտկոմը ՀՅ «Դաշնակցության» իր այդ պարտավորվածության իրականացման համար հնարավորություն տալու նպատակով միջնորդություն է ստանձնում Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին առաջարկել, որպեսզի նա ՀՅ «Դաշնակցություն» օրինականացնի և նրա հետ բանակցի համատեղ աշխատանքի հարցի շուրջ:

Ռիգա, Բիլդերլինդստոֆ
14 հուլիսի 1921 թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 38; գ. 194, թ. 6: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 19

Ա. ԻՈՖՅԵԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ Վ. ՄՈՂՈՏՈՎԻՆ ԵՎ Գ. ՉԻՉԵՐԻՆԻՆՆ՝⁹⁰

Մտից N. 915, 15.VII.1921թ.

Ռիգայից, 15.VII, 10.10. Գրություն ուղիղ կապով Մոսկվա, ՌԿ(Բ)Կ Կենտկոմ, ընկ. Մոլոտովին, ԱԳՇԿ, ընկ. Չիչերինին

«Դաշնակցության» պատվիրակությունը խնդրում է փոխանցել Ձեզ հետևյալ հեռագիրը. «Հայ Յեղավորական «Դաշնակցություն» Կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակության առաջարկությունները ՌԿ(Բ)Կ Կենտկոմին Ձանգեգուրյան ճակատում զինադադարի հարցով: Մենք այսօր Թեիրանից ստացել ենք հուլիսի 11-ի և 12-ի մանրամասն հեռագրեր Ձանգեգուրյան ճակատում ռազմական ընդհարումների մասին, որ սկսվել են մոտավորապես երկու շաբաթ առաջ: Հեռագրերի համաձայն՝ Խորհրդային Հայաստանը երեք կողմից (Չաբուղի, Նախիջևանի և Դարալագյազի) խոշոր զորամասերով հարձակվել է Ձանգեգուրի վրա: Տեղի են ունեցել դաժան մարտեր երկու կողմերից մեծ զոհերով, ինչի արդյունքում զանգեգուրցիներին հաջողվել է մի քանի ճակատներում կանգնեցնել ձեռնարկ-

90 Փաստաթղթի վրա կա շտամպ «Ստուգված է»:

ված հարձակումը: Նկատի առնելով, որ հարցի հիմքում, որը զանգեզուրցիներին դրդել է զենք վերցնել, հատկապես հայկական խնդրի ընկալման ու լուծման նպատակն է [և այժմ], ըստ երևույթին, համագործակցություն է հաստատվում ՌԿ(Բ)Կ Կենտկոմի և հայկական «Դաշնակցություն» հեղափոխական կուսակցության միջև, այն զգալիորեն թեթևացնում է մեր փոխհարաբերությունների խնդիրը: Եվ հետագա անիմաստ արյունահեղությունից խուսափելու համար, մենք երկրորդ անգամ առաջարկում և խնդրում ենք ՌԿ(Բ)Կ Կենտկոմին՝ Հայաստանի Ժողովուրդի առջև միջնորդություն նախաձեռնել ռազմական գործողությունների դադարեցման մասին և դրանով հնարավոր դարձնել ընդունելի պայմաններով երկու կողմերի համար ստեղծված կոնֆլիկտի վերացումը: Նշյալ քայլը մեր կուսակցական Գերագույն Մարմնի միջոցով կընդունենք և մենք: Խնդրում ենք մեր առաջարկությունը հեռագրով փոխանցել Մոսկվա և պատասխանը ընկ. Իոֆֆեի միջոցով հեռագրով հաղորդել մեզ: Վ. Փափազյան, Ա. Իսահակյան⁹¹, Վ. Նավասարդյան⁹²: 13 հունիսի 1921թ., Բիլդերլինգսհոֆ»:

Մենք մեր կողմից ենթադրում ենք, որ դաշնակների հետ համաձայնությունը հեշտ հասանելի է և որ դրա համար էլ Ջանգեզուրյան ճակատում հետագա արյունահեղությունը պետք է դադարեցվի: Երեկ ավարտվեցին բանակցությունները: Ընկերներ Տեր-Գաբրիելյանը և Տեր-Վահանյանը մեկնում են այսօր, քերում են մանրամասն զեկույցը և նյութերը: Արձանագրությունները կուղարկվեն լրացուցիչ: Դաշնակների տեղեկություններով՝

Խորհրդային Հայաստանի գործերը ռազմա-ճակատում անհաջողություններ են կրում: Ն 3/8, 1921 թ. հուլիսի 14:

Իոֆֆե
Տեր-Գաբրիելյան
Տեր-Վահանյան

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 30: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 20

Ս. ԼՈՒԿԱՇԻՆԻ ՀԵՌԱԳԻՐԸ Գ. ՉԻՉԵՐԻՆԻՆԵՆԵՎ Ս. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ՝⁹³

Մոսկվա, 3 հասցեով՝ ՌԿ(Բ)Կ Կենտկոմին, ընկ. Չիչերինին, ընկ. Տեր-Գաբրիելյանին,

Ջանգեզուրը [ապստամբությունը] բացարձակապես ճնշվել է: Դաշնակների հետ բանակցությունների վարումը Հայաստանի Կոմկուսի Կենտկոմը աննպատակահարմար է համարում և նույնիսկ վտանգավոր, առավել ևս, որ «Դաշնակցություն» կուսակցությունը արտասահմանում բացարձակապես վարկաբեկվել է, իսկ երկրի ներսում մենք նրանց վերջնականապես ջախջախել ենք, այնպես որ անհրաժեշտ է շտապ հաղորդել Ռևել⁹⁴:

Կենտկոմի քարտուղար Լուկաշին⁹⁵
16 հուլիսի 1921թ.

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, ք. 31: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

91 Ջանալյան (Իսահակյան) Արշակ (1882-1940) - ԶՅԴ հայտնի գործիչ: Եվրոպայի հայ ուսանողական միության հիմնադիր: Մասնակցել է Երզնկայի զինադպրոցի կնքմանը (1917), Անդրկովկասյան Սեյմի անդամ (1918), ԶԳ դեսպան թիֆլիսում, ԶԳ հաղորդակցության նախարար: 1920 թ. օգոստոսի 10-ին թիֆլիսում կնքել է հայ-ռուսական համաձայնագիր: Եղել է Սոցիալիստական Ինտերնացիոնալում ԶԳ Երկրայացուցիչը: Նրա մասին Վ. Փափազյանի գնահատականը հետևյալն է. «Ջանալեանը պատրաստուած շատ փայլուն ընդդիմախոս եւ ճարպիկ փաստարկող էր. անոր ուղեղը կարծես տիեզերանոսի մեքենա ըլլար՝ տեղոտ, արագ, բուռն եւ մեծ զարկերով ու թափով աշխատող»: Տես Փափազեան Վ., Իմ յուշերը, հ. 3, էջ 214:

92 Նավասարդյան Վահան (29.11.1888, Շուշի-24.06.1956, Կահիրե) – ԶԳ անվանի գործիչ և տեսաբան: Եղել է «Չորիզոն» թերթի խմբագիր (1917, Թիֆլիս), ԶԳ խորհրդարանի անդամ, «Յուսաբեր» թերթի խմբագիր (1923-1956, Կահիրե), ԶԳ Բյուրոյի անդամ (1933-1956):

93 Փաստաթղթի վրա կա նշում. «Ընկ. Մոլոտովին»:

94 Էստոնիայի մայրաքաղաք Տալլինի նախկին անվանումը:

95 Լուկաշին (Սրապիոնյան) Սարգիս Լուկյանի (1885-1937) – ԶԿ Կենտկոմի քարտուղար (1921-1922), ԶԽՍՀ ժողովմտորդի նախագահ (1922-1925): Գնդակահարվել է:

Թիվ 21
Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՄՈԼՈՏՈՎԻՆՆԻ
ՎԻՆՆԵՆՆԻ⁹⁶

1921թ. հուլիսի 24

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ, ֆ. 2, ց. 2, գ. 776, թ. 1: Բնագիր: Ինքնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Ընկ. Մոլոտովին,
Հարգելի ընկեր,

Դեռևս հուլիսի 16-ին, Կենտրոնական Կոմիտեին, ընկերներ Իոֆֆեի, Տեր-Գաբրիելյանի և Տեր-Վահանյանի ուղարկած զեկույցի առթիվ, ես [Ռ.Կ(բ)Կ] Քաղբյուրոյին գրել էի, որ Ռիգայում նախաստորագրված համաձայնագիրը ոչ միայն բացարձակապես անընդունելի է, քանի որ մեր պատվիրակները խոստացել էին Հայկական Հանրապետությանը թուրքական Հայաստանի միավորման համար միջնորդել, այլև «ղաշնակների» ձեռքում այդպիսի նախագծի թողնելու փաստը կարող է մեր թուրքական և ընդհանրապես՝ արևելյան քաղաքականության համար լուրջ բարդությունների հանգեցնել, և մեզ համար կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ: Այդ օրվանից ավելի քան մեկ շաբաթ է անցել, և Քաղբյուրոն ոչ մի որոշում չի ընդունել: Այդ առթիվ Կենտկոմի վերաբերմունքի բացակայության փաստն ինքնին կարող է անբարենպաստ հետևանքներ ունենալ: Այդ հանգամանքը կարող է այն իմաստով ընկալվել, որ Կենտկոմը Մոսկովյան Ռուս-թուրքական պայմանագրի խորտակման քաղաքականության մեջ դատապարտման արժանի ոչ մի հատուկ բան չի գտնում: Այն բանի համար, որպեսզի կանխարգելենք այդ ոչ սովորական առաջարկությունների ճակատագրական հետևանքները, անհրաժեշտ է, որպեսզի Կենտկոմն անհապաղ վերաբերմունք ցույց տա, քանի որ Կենտկոմի կողմից դատապարտման բացակայությունն ինքնին մեզ ուժեղ կվճարի:

Կոմունիստական ողջույնով՝
Գեորգի Չիչերին

ԹԻՎ 22
Ռ.Կ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՂԲՅՈՒՐՈՅԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

Հույժ գաղտնի

Ռուսաստանի Կոմունիստական(բուլշևիկների)կուսակցության Կենտրոնական կոմիտեի

Կենտկոմի Քաղբյուրոյի 26.VII.1921թ. N 53-a արձանագրությունից քաղվածք

26.VII.21թ. հարցումով

Հեռախոսով հարցվել են Կենտկոմի Քաղբյուրոյի անդամներ ընկերներ Լենինը, Տրոցկին, Ջիռովը, Կամենևը⁹⁷ և Մոլոտովը:

13. Ռիգայում ընկ. Իոֆֆեի կողմից դաշնակների հետ նախաստորագրված համաձայնության նախագծի մասին:

Որոշեցին՝

Ռիգայում ընկ. Իոֆֆեի և այլոց կողմից դաշնակների հետ ստորագրած համաձայնագրի նախագիծը կտրականապես մերժել:

Կենտկոմի քարտուղար (Վ. Մոլոտով)

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թ. 32: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

2012 թ. հունվար-մարտ, 2012 թ. (Ժ) քաղաք, թիվ 1 (37) հունվար-մարտ, 2012 թ.

ՎԻՄ համահայկական հանդես

96 Կան հետևյալ նշագրումները. «N 3 Իոֆֆեին», «Յայաստան», «Յանձնել արխիվ»: Վերջինն արված է Վ. Լենինի կողմից: Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 522.
97 Կամենև (Ռոզենֆելդ) Լեւ Բորիսի (1883-1936) - ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ (1919-1926), ՌՍՖՍՀՄ և ԽՍՀՄ Ժողկոմխորհի փոխնախագահ (1922-1926): Երեք անգամ հեռացվել է Կոմկուսից: Գնդակահարվել է:

Թիվ 23

**Ա. ԻՈՅՖԵՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ՄՈՒՆՏՈՎԻՆԻ
ԵՎ Գ. ՉԻՉԵՐԻՆԻՆԻ**⁹⁸

ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրո, ընկ.
Մոլոտովին,
Արտգործժողկոմ ընկ. Չիչերինին,

Հարգելի ընկերներ,

Ընկ. Չիչերինից ծածկագրված հեռագիր
եմ ստացել, ըստ որի դաշնակների հետ համա-
ձայնության 2-րդ կետը Կենտկոմը կտրակա-
նապես մերժում է, քանի որ Երևանում համա-
ներման հարցի քննարկմանը դեմ է և
Թուրքական Հայաստանի հարցին անդրա-
դառնալը բացարձակապես անթույլատրելի է
համարում, որովհետև մենք Մոսկովյան պայ-
մանագրին խստորեն հավատարիմ ենք մնում,
և դրա համար էլ մեծ դժբախտություն կլինի,
եթե դաշնակների մոտ մեր կողմից նախաստո-
րագրված թղթի կտորը մնա: Ընկ. Չիչերինը
ասում է, որ մենք «ցավալիորեն փորձանքի մեջ
զցեցինք» և հարցնում է, թե արդյոք հնարավոր
չէ այնպես դասավորել, որպեսզի «հետքեր
չմնան»:

Ես խորապես ցավում եմ, եթե «ակամա
փորձանքի մեջ եմ զցել», սակայն ինձ մեղավոր
համարել չեմ կարող: Այդ մասին ստորև: Նախ
և առաջ, ես կցանկանայի նշել, որ այժմ, ցա-
վալիորեն, հետքերն արդեն անհնար է ոչնչաց-
նել, անգամ եթե ինձ նույնիսկ հաջողվի տար-
բեր խորամանկություններով դաշնակներից
«դժբախտ» թղթի կտորը հետ ստանալ, ապա
այդ ժամանակ էլ «հետքերը» կմնան: Քանի որ
բանակցություններն այժմ հերքել չի կարելի, և
դրանք միևնույնն է՝ որպես փաստ մնում են,
ապա նույնիսկ թղթի կտորի ոչնչացման փաս-
տի դեպքում էլ բանակցությունների ժամանակ
ասված ամեն ինչ կմնա: Սակայն ես մեկ ան-
գամ էլ կրկնեմ, որ այստեղ մեր բոլոր հայտա-
րարությունները բացառապես մեր անձնական
անունից⁹⁹ են կատարվել, ինչը բազմիցս շեշտ-
վել է մեր կողմից, և դրա համար էլ ոչ մի պար-

տադիր ուժ չունեն: Այդ իսկ պատճառով, մենք
այստեղ ոչինչ չենք ստորագրել: Եթե անգամ
ընդունենք, որ իմ անձնական հայտարարու-
թյունները իրավաբանական ուժ չունեն և ամեն
դեպքում՝ բարոյական ուժ ունեն, ապա ես
ստորև կփորձեմ ցույց տալ, թե ինչպես այդ
փորձանքից կարելի է ձեռնառու հնարք կատա-
րել: Այժմ երկու խոսքով ցանկանում եմ գործի
փաստական կողմին անդրադառնալ:

Բացարձակապես ոչ մի տեղեկատվու-
թյուն և հրահանգ կամ ցուցում ես չեմ ստացել, և
հենց այդ բանակցություններում, իհարկե, չէի
կարող իմանալ, թե ինչն է վտանգավոր և ինչը՝
օգտակար: Իսկ քանի որ բանակցությունների
ժամանակ ամեն դեպքում չի կարելի լռել, քանի
որ այն ժամանակ ոչ մի բանակցություններ էլ
չէին լինի, իսկ մեր արևելյան քաղաքականութ-
յունն ինձ բավականին քիչ և վատ է հայտնի (ի
միջի այլոց նկատեմ, որ անգամ մոսկովյան
պայմանագիրն ինձ միայն պատահաբար է
հայտնի դարձել), ապա իմ բոլոր ելույթներում
և հայտարարություններում ես բնականաբար
միայն մեր միջազգային քաղաքականության
ընդհանուր նախադրյալներից կարող էի ելնել:
Կտրականապես հաստատում եմ, որ դաշնակ-
ների հետ բանակցությունների ողջ ժամանա-
կահատվածում իմ կողմից ոչ մի այնպիսի բան
չի հայտարարվել, ինչը մենք արդեն վաղուց և
ոչ մեկ անգամ ասած չլինենք: Գեռեսուս Բրեստի
ժամանակ մենք բոլորս (և ես անձամբ Հաքքի
փաշայի հետ բանակցելիս) ասել ենք, որ
առանց Թուրքական Հայաստանի հարցի լուծ-
ման՝ Հայկական հարցի լուծում չենք պատկե-
րացնում և ինքնորոշման իրավունք ենք պա-
հանջել մաս հայ գաղթականների համար:
Նույն բանը Բեռլինում Թալալաթի¹⁰⁰ հետ իմ
բանակցությունների ժամանակ եմ բազմիցս
հայտարարել: Նույն բանն անցյալ տարի
դաշնակներին Կասեմենը և Լիտվինովն են հայ-
տարարել, ինչի վերաբերյալ դաշնակների մոտ
միանգամայն իրական «հետքեր» կան: Նույն

98 Վերին ծախ անկյունում կա ձեռագիր նշագրում. «Քաղբյուրոյի անդամներին ի գիտություն: Վ. Մոլոտով:
4.VIII»:

99 Այսուհետ ընդգծումները փաստաթղթին են:

100 Այսպես է փաստաթղթում:

բանը, վերջապես, մեր կառավարության և Կոմիտեերնի բազմաթիվ հայտարարություններում են առկա: Կրկնում են, Ռիգայում մենք ոչ մի նոր բան չենք ասել, սակայն բազմիցս ասել ենք, որ խոսում ենք մեր անձնական ամուսնից: Եթե նույնիսկ այդ ամենը պետք չէր ասել, ապա հարկավոր էր մեզ նախագրուչացնել: Սակայն ես մինչև այժմ համաձայն չեմ, որ այդ ամենը պետք չէր ասել:

Ես ընդհանուր քաղաքական դրության իմ պատկերացումից եմ ելնում, և գլխավորապես, իհարկե, իմ եվրոպական տեսանկյունից: Ինչպես միշտ, ես այն հանգամանքն եմ հատկապես հաշվի առել, թե դաշնակների հետ բանակցությունները և համաձայնագիրը խոշոր կապիտալիստական երկրների պրոլետարական զանգվածների վրա ինչպիսի տպավորություն կարող են թողնել: Ինչքան էլ ինքնին ցանկացած բանակցությունների գործնական արդյունքները կարևոր լինեն, ես, սակայն, միշտ հատկապես դրանց ազիտ-քարոզական նշանակությունն եմ հաշվի առնում, և երբեք չեմ ասում ոչ մի բան, ինչն այդ առումով հնարավոր լիներ մեր դեմ օգտագործել, ինչի պատճառով էլ Արտգործժողկոմատի հետ այդքան հաճախակի կոնֆլիկտներ են ունենում:

Ինքնորոշման մասին հարցը մեր միջազգային ազիտացիայի ամենից արմատական հարցերից է: Կայսերապաշտական խառնակչությունը, որ համաշխարհային պատերազմի հանգեցրեց և դրանից հետո էլ ավելի սրվեց, քանի որ զանգվածներին հրում է մեր կողմը, քանի որ մենք այդ խառնակչությանը ոչ մի մասնակցություն չենք ունենում և ոչ մի կայսերապաշտություն չենք ծածկում, այլ բոլոր ճնշված ժողովուրդների միակ և իրական պաշտպանն ենք: Հենց հիմա, երբ Կովկասում մեր իրական քաղաքականությունն այդ իդեալական քաղաքականության հետ որոշակի հակասության մեջ է, երբ կովկասյան սոցիալ-համաձայնողականների՝ մեր դեմ ուղղված ազիտացիան անկասկած մեզ խտորեն կվնասի, ըստ իս, Հայկական հարցը մեր հարց ճանաչելուց հրաժարվելը և այդ հարցում Բրեստի ժամանակակնից ունեցածից տար-

բերվող դիրքորոշում որդեգրելն աննպատակահարմար կլինի: Հենց այժմ, Երրորդ ինտերնացիոնալի ճգնաժամի և արևմտյան բանվորների մտքերում ստեղծված անխուսափելի խառնաշփոթության պահին, ներքին քաղաքականության մեջ մեր այսպես կոչված «աջացումը», մեր միջազգային քաղաքականության ուղեգծի հատուկ շիտակությունը կարևոր նշանակություն կունենար: Ամենից աղմկոտ թշնամի դաշնակների մեր կողմն անցնելը Չխեիձեին և նրա ընկերությանը ոչ միայն մահացու հարված կհասցնի, այլև Արևմուտքում տատանվող բանվորների ուղեղերը մի քիչ կլուսավորի, որոնց բոլոր կողմերից փորձում են համոզել, որ Ռուսաստանում կոմունիստական փորձարկումները լրիվ ձախողում են ապրել, քանի որ Լենինը ստիպված էր հանձնվել ներքին քաղաքականության մեջ, որտեղ նա «կապիտալիզմ սովորելու» է գնում, և արտաքին քաղաքականության մեջ, որտեղ նա ստիպված է որոշ կայսերապաշտների հետ համաձայնության գնալ՝ առավել թուլերին առավել ուժեղներին կերակրման հանձնելով (Անգլիայի հետ պայմանագրով՝ նրան հիմնումներին, աֆղանցիներին և այլոց հանձնելով, Քեմալի հետ պայմանագրով հայերին և այլոց թուրքերին հանձնելով): Հենց Արևելքում ինքնորոշման պաշտպանության ուղեգծի շիտակությունը պետք է հատուկ կարևորություն ունենա, քանի որ Արևելքում, առավել քան որևէ այլ տեղում, ազգային-ազատագրական շարժումը ընթանում է և կրնթանա կոմունիստական, այսինքն՝ մեր Ռուսական դրոշի ներքո, քանի դեռ մենք ինքներս դրան հավատարիմ ենք:

Ես դույզն իսկ չեմ կասկածում, որ մեր այդպիսի պահվածքը և դաշնակներին տրված մեր համապատասխան պատասխանը եվրոպական տեսանկյունից միայն օգտակար կլինեն: Եվ ես չեմ հասկանում, թե ինչպես այդ ամենը կարող է քեմալականների հետ կնքված Մոսկովյան պայմանագրի խախտում գնահատվել: Չէ՞ որ մենք պարտավոր ենք և կկարողանանք Անգորային հաղորդել դաշնակներին մեր տված պատասխանը որպես Ռ-Կ(բ)Կ

ԵՐԿԵՆՆԵՐԻ
1921 թվականի օգոստոսի 31-ին
Գ-Գ(Գ) քաղաքի քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012
ՎԻՄ համահայկական հանդես

Կենտրոնի (այլ ոչ թե՛ կառավարության) սկզբունքային կարծիք, հայտարարելով, որ Ռ-ՍՖԽՀ կառավարությունը Մոսկովյան պայմանագրին խստորեն հավատարիմ է մնում, և չցանկանալով խառնվել ո՛չ Թուրքիայի, ո՛չ Հայաստանի ներքին գործերին՝ Անգորայի կառավարությանն առաջարկում ենք Խորհրդային Հայաստանի հետ բանակցություններ սկսել այն հիման վրա, որ իրենք քեմալականներն են արդեն բանակցել դաշնակների, այսինքն՝ Հայաստանի նախկին կառավարության հետ: Կրկնում եմ, չեմ կարող հասկանալ, թե ինչպես այդ ամենը կարող է համարվել պայմանագրի խախտում, սակայն ես միանգամայն հասկանում եմ, որ Քեմալն անհարմար դրության մեջ կրնկնի, քանի որ չի կարողանա մեզ պատասխանել, որ միմիայն Ռուսականի ապախորհրդայնացման դիմաց դաշնակներին Թուրքական Հայաստանի մի մասն է առաջարկել, և մինևույն ժամանակ, Անտանտի հետ իր ներկա խաղերի մեջ, պարտավորվելով Հայկական հարցում, մեզ չի կարողանա պատասխանել, որ քթած ունի հայերի վրա և Հայաստանի հետ ոչ մի պայմանագիր չի ցանկանում կնքել: Այսինքն՝ Քեմալը լավ դաս կստանա, որ մեր թիկունքում մեզ թշնամական քաղաքականություն վարելու հարկ չկա: Ես նաև ենթադրում եմ, որ, ժամանակ առ ժամանակ, մեր բոլոր ակամայից հովանավորյալներին հարկավոր է դասեր տալ:

Սակայն, թե ինչպիսին է հարցի վիճակն արևելյան տեսանկյունից, մինչև տեղում արևելքի հետ ծանոթանալը՝ դատել չեմ համարձակվի: Ես միանգամայն պատկերացնում եմ այնպիսի դրություն, որի ժամանակ մեր կողմից քեմալականների համար ստեղծած ցանկացած անհարմարություն հենց մեզ ձեռնտու չէ: Ես նաև հասկանում եմ, որ հայտնի պայմաններում մենք ստիպված կլինենք այնպիսի քաղաքականություն վարել, որի դեպքում իբր թե աջակցելով փոքր ժողովուրդներին՝ մենք փաստորեն ստիպված ենք նրանց Քեմալական կայսերապաշտության կերակրմանը

հանձնել, որ կարող է այնպիսի իրավիճակ լինել, երբ իսլամականության հետ մեր լավ հարաբերություններին պետք է ամեն ինչ զոհաբերվի, և այդ ժամանակ, հետևաբար, մեր բոլոր այդ մեղքերը քավելու և մեր ընդհանուր գծի բոլոր խեղաթյուրումների քողարկման կարողությունը լավագույն դիվանագիտությունը կլիներ:

Եթե իրոք Արևելքում մնան քաղաքականության անհրաժեշտություն լինել, ապա մենք, իհարկե, այստեղ բազմաթիվ սխալներ ենք թույլ տվել: Այդ հարցում մեղքն ընկնում է նրանց վրա, ովքեր մեզ չնախագուշացրին, սակայն սխալներն էլ է հարկավոր ուղղել:

Ես այժմ էլ կրկին ոչ մի ցուցում չունեմ: Եթե ես ուղղակի դաշնակներին հաղորդեմ, որ երկրորդ կետը բացարձակապես անընդունելի է, ապա, ըստ իս, կստացվի ևս մեկ սխալ: Դաշնակները և արտասահմանում նրանց բոլոր կառույցները, որ ամենուրեք ճանաչվում են որպես Հայկական հանրապետության պաշտոնական ներկայացուցչություն, վայնասուն կբարձրացնեն և ըստ ամենայնի մեզ տհաճություն կպատճառեն, իսկ Քեմալի հանդեպ մենք ամեն դեպքում ոչինչ չենք շահում, քանի որ բանակցություններն ու մեր այստեղի հայտարարությունները նրան հայտնի կդառնան: Դրա համար էլ դաշնակներին հարկավոր է քարշ տալ: Ես նրանց կասեմ, որ ոչ մի պատասխան չեմ ստացել, և կխոստանամ պատասխան Մոսկվայից: Երկուշաբթի ես կմեկնեմ, կխոսեմ և կպատկերացնեմ, թե նրանց ինչ պատասխանեմ: Ինչ վերաբերում է քեմալականներին, ապա իմ «սխալից» (եթե այդ սխալ է), ըստ իս, կարելի է շահել: Իմ կարծիքով, այդ դեպքում հարկավոր է Նացարենուսի¹⁰¹ միջոցով Անգորային հաղորդել, որ դաշնակները Հայաստանում համատեղ աշխատանքի հարցի շուրջ Ռ-Կ(ք)Կ Կենտրոնի հետ բանակցություններ են խնդրել: Այդ բանակցությունների ժամանակ նրանք սկզբունքորեն հայկական հարցն առաջադրեցին: Կենտրոնի ներկայացուցիչները սկզբունքորեն արտահայտվե-

101 Նացարենուս Սերգեյ Պյոտրի (1882-1938) – եղել է Թուրքիայում ՌՍՖԽՀ լիակար ներկայացուցիչը: Գնդակահարվել է:

ցին, ...¹⁰² և այդտեղ շարադրել երկրորդ կետը, սակայն ՌՍՖՖՍՀ կառավարությունն այնքան լոյալ է Մոսկովյան պայմանագրի իրականացման հարցում, որ ազդեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմի վրա՝ նրա ներկայացուցչի կողմից այդ հայտարարության չստորագրման իմաստով: Եվ այդ, չնայած այն բանին, որ դաշնակները պաշտոնապես հաղորդել էին Քեմալի կառավարության հետ իրենց բանակցությունների և խորհրդայինի ապախորհրդայնացման դիմաց վերջինին կողմից թուրքական Հայաստանի մի մասի խոստացման մասին: Այսպիսով, Ռիզա-յի միջադեպը, նույնիսկ այդ դեպքում, կարող է Քեմալի հետ մեր «բարեկամության» ամրապնդմանը ծառայել: Եթե իմ արևելյան այցելությունը պետք է այնպիսի բնույթ ունենա, ինչպես ես ենթադրում եմ, և ինձ հարկ կլինի Անգորայում լինել, և եթե տեղում ծանոթանալուց հետո կպարզվի, որ Քեմալի առնչությամբ մեր նման քաղաքականությունը ճիշտ է, ապա ես ինքս Անգորայի կառավարության հետ այդ նույն ոգով կկարողանամ գրուցել: Մանրամասնությունները՝ անձնական զեկուցագրով:

Կոմ.[ունիստական] ողջ.[ույնով]
Ա. Իռֆֆե

Ռիզա, 1921թ. 28.VII

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 191, թթ. 39-41:
Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն:
Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 24

Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ԼԵՆԻՆԻՆ¹⁰³

Դաշնակներին մեր պաշտոնական պատասխանի առթիվ ընկ. Իռֆֆեի նամակի վերջում ասվում է, որ նրան իբր թե պատրաստվում են տարբեր արևելյան երկրներ, և ի միջի այլոց՝ Անգորա գործուղել: Ես մինչև այժմ բացարձակապես չեմ լսել այն մասին, որ ենթադրվի ընկ. Իռֆֆեին Անգորա ուղարկել: Ընկ. Մոլոտովի

102 Բազմակետերը փաստաթղթին են:

103 Տե՛ս Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 526.

104 Խոսքը Միջին Ասիայում խորհրդային քաղաքականության դեկլար մարմնի՝ Թուրքեստանյան հանձնաժողովի մասին է:

105 Ռոտշտեյն Ֆյոդոր Արոնի (1871-1953) – եղել է ՌՍՖՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Պարսկաստանում (1921-1922):

ինձ հաղորդեց, որ ընկ. Իռֆֆեին նկատի ունեն ուղարկել Թուրքիանձնաժողով¹⁰⁴ ներքին քաղաքականության նկատմամբ հսկողության համար, որը, իհարկե, նման հսկողության խիստ կարիք ունի, սակայն ոչ մեկն արտաքին քաղաքականության ոլորտում ընկ. Իռֆֆեի մտադրության մասին չի հաղորդել: Այդպիսի հանձնարարությունների դեմ, հատկապես թուրքական կառավարության առնչությամբ, ես կտրականապես բողոքում եմ: Ո՛չ ընկ. Նա-ցարենուր Անգորայում, ո՛չ ընկ. Ռոտշտեյնը¹⁰⁵ Թեհրանում՝ ընկ. Իռֆֆեի հսկողության կարիքն ամենևին չունեն:

Ընդհանրապես, արևելյան հարցերի առթիվ ընկ. Իռֆֆեի հայացքները ծայրահեղ միամիտ, հիացական և ռոմանտիկ են: Դեռևս Բեռլինում գտնված ժամանակ արևելյան քաղաքականության ոլորտում նրա դիտարկումները միշտ ծայրահեղ անհաջող են եղել, օրինակ՝ նրա բանակցությունները Թալասի հետ: Ընկ. Իռֆֆեի մոտ միշտ մեզ կատարված փաստերի առջև կանգնեցնելու հակում կա: Մենք չենք կարող նախօրոք իմանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու, և դրա համար էլ նա ասում է, որ հրահանգներ չեն եղել: Նույն բանը նա ասում է և դաշնակների հետ ներկա բանակցությունների առնչությամբ, ինչի առթիվ ոչ ոք դույզն իսկ չափով չէր կարող գուշակել, թե ինչ հարցերի նրանք կանդրադառնան: Իսկ բանակցությունների սկզբից ընկ. Իռֆֆեն մեզ ոչ մի խոսքով չի տեղեկացրել, թե ինչի մասին է այնտեղ խոսվել:

Կոմունիստական ողջույնով՝
Գեորգի Չիչերինի
1921թ. հուլիսի 31

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ, ֆ. 5, ց. 1, գ. 2057, թթ. 37-38: Բնագիր: Ինքնագիր:
Թարգմանություն ռուսերենից:

Գ. ՉԻՉԵՐԻՆԻ ՆԱՄԱԿԸ Վ. ԼԵՆԻՆԻՆ¹⁰⁶

Մեծարգո Վլադիմիր Իլյիչ,

Այն բանի համար, որպեսզի դաշնակներին Կենտրոնական Կոմիտեի ներկայացուցիչների առաջարկությունների արդյունքները թուլացվեն, մենք ընկ. Իոֆֆեի հետ համաձայնեցինք, որ դաշնակների հետ նպատակահարմար կլինի ձգձգել: Այդ նպատակի համար մենք առաջարկում ենք նրանց հայտարարել, որ իրենց վերաբերող բոլոր հարցերը որոշվել է հաղորդել Երևան:

Մյաժամանակ, մենք իմ նախկին տեսանկյունի հետ համընկնող այն եզրակացությանը հանգեցինք, ինչին միացել է նաև ընկ. Լիտվինովը, որ վտանգավոր է սպասել, մինչև թուրքերը Ռիգայում տեղի ունեցած բանակցությունների մասին հենց հայերից կիմանան: Մեր հարաբերությունների համար անհամեմատ նվազ վտանգավոր և վնասակար կլինի, եթե մենք ինքներս առաջ ընկնենք և թուրքերին պատմենք, որ դաշնակները Կենտրոնական Կոմիտեի անդամներին խաբել են: Դա թուրքերին ցույց կտա, որ մեր Կառավարությունն այդ քաղաքականության հետ ոչ մի ընդհանուր բան չունի, և այժմ կեթ մեր քաղաքականությանը հակասող առաջարկությունները մերժել է: Դրա համար էլ մենք նպատակահարմար ենք գտնում, որպեսզի ես այժմ կեթ համապատասխան ձևով և ողջ տեղի ունեցածի որոշակի մեղմացմամբ ինքս իմ անունից այդ միջադեպի մասին Ալի Ֆուադին¹⁰⁷ պատմեն:

Կոմունիստական ողջույնով՝

Գեորգի Չիչերին

1921թ. օգոստոսի 3

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ, ֆ. 2, ց. 2, գ.

803, թթ. 1-2: Բնագիր: Ինքնագիր: Թարգմանություն ռուսերենից:

Վ. ԼԵՆԻՆ ՆՈՒԱՍՏԱՆԻ Գ. ՉԻՉԵՐԻՆԻՆ¹⁰⁸

1921թ. օգոստոսի 5

Ընկեր Չիչերինին: Ստացա դաշնակներին վերաբերող Ձեր նամակը: Ալի Ֆուադի հետ Ձեր առաջարկած բանակցությունների առթիվ չեմ առարկում:

Լենին

Ռուսաստանի սոցիալ-քաղաքական պատմության պետական արխիվ, ֆ. 2, ց. 1, գ.

20149, թ. 1: Պատճեն: Թարգմանություն ռուսերենից:

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՆ ՆԱԽԱԳԻԾ

Ռ.Կ(բ) Կենտկոմի և Հայ Յեղափոխական «Դաշնակցություն» կուսակցության պատվիրակները միջկուսակցական կոնֆերանսում, համակողմանի քննարկելով հայկական դեմոկրատիայի քաղաքական խնդրի լուծման հարցը՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության և նրա ազատ, անկախ քաղաքական գոյության երաշխավորման նպատակով, կնքեցին հետևյալ համաձայնագիրը.

1. Ռ.Կ(բ) և ճանաչում և հռչակագրում է Հայաստանի անկախությունը և պարտավորվում է ազդել Ռ.Ս.ՖԻՀ կառավարության վրա, որպեսզի նա Հայաստանի հետ հարաբերություններում խստորեն հարգի վերջինիս ինքնիշխանության սկզբունքները,

2. Ռ.Կ(բ) և ընդունում է, որ հայկական հարցը կարելի է համարել լուծված միայն այն ժամանակ, երբ Հայաստանը տարածքային

106 Կան ձեռագիր նշագրումներ. «N. 3, Իոֆֆեին», «ԲԲ 53a/13: Գաղտնի արխիվ. 26/VII-21թ.»: Վ. Լենինը ձեռագիր նշագրում է արել. «Չեռախոսով հաղորդել Չիչերինին, 4.VIII»: Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 526.

107 Ալի Ֆուադ Ջեբեսոյ (1882-1968) – եղել է քեմալական Թուրքիայի դեսպանը ՌՍՖՖՆ-ում (1921), կնքել է Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը:

108 Տե՛ս Генотид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 527.

առումով կմիավորվի և երբ այնտեղ կտեղավորվի ու էթնիկապես կմիավորվի Հայ ժողովուրդը,

3. Հայկական հարցի լուծման նպատակով ՌԿ(Բ)Կ-ն պարտավորվում է ՌՍՖԽՀ կառավարության վրա ազդել, որպեսզի վերջինս իր տրամադրության տակ գտնվող միջոցներով համոզի Թուրքիային լուծել հայկական հարցը՝ հայ ժողովրդի ազատ քաղաքական գոյության համար Թուրքական Հայաստանից բավարար տարածք Ռուսական Հայաստանին միավորելու ճանապարհով, դեպի ծով ելքով,

4. Այն դեպքում, եթե հայկական հարցի լուծման համար անհրաժեշտ լինի Հայաստանն ապախորհրդայնացնել, ՌԿ(Բ)Կ-ն կանգ չի առնի նաև Հայաստանի ապախորհրդայնացման առջև,

5. Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցությունն ընդունում է, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ հայկական խնդրի լուծման դեպքում Հայաստանի կողմնորոշումը՝ այնտեղ գոյություն ունեցող կառավարման ձևից բացարձակապես անկախ, պետք է լինի Ռուսական,

6. Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցությունը պարտականություն է ստանձնում.

Ա. Սույն համաձայնագրի հիմքում ընկած գաղափարների շուրջ համախմբել հայ ժողովրդի աշխատավոր զանգվածներին ինչպես հայրենիքում, այնպես էլ դրանից դուրս՝ բոլոր գաղթօջախներում,

Բ. Ռուսաստանի նախաձեռնությամբ հայկական հարցի լուծման գործում հասնել եվրոպական տերությունների աջակցությանը և օժանդակությանը,

Գ. Թուրքիայի հետ անմիջական բանակցությունների միջոցով ազդել վերջինիս վրա և նրան համոզել զիջող լինել թուրքական Հայաստանից ռուսականին բավարար չափի տարածքի միավորման հարցում, և դրանով Ռուսաստանի գործը թեթևացնել:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 194, ք. 1-2:

Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 28
ՀԱՎԵԼՎԱԾ N 4

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության Գերագույն Մարմնի պատվիրակության առաջարկությունը ՌԿ(Բ)Կ Կենտկոմի պատվիրակությանը

Նկատի առնելով Հայկական հարցի ընկալման և լուծման հարցում ՌԿ(Բ)Կ Կենտկոմի ու Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության միջև հաստատված համախոհությունը, և գոյություն ունեցող տարածայնությունների վերացման նպատակով երկրի կառավարման հարցերում Հայաստանի կոմունիստական կուսակցության և «Գաշնակցություն» կուսակցության միջև նրանց լրիվ համագործակցության և ջանքերի համակարգման ձգտումը, Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության պատվիրակներն անհրաժեշտ են համարում դիմել ՌԿ(Բ)Կ Կենտկոմի միջնորդությանը, որպեսզի Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության համար հետևյալ հիմունքներով ընդհանուր և ընդունելի քաղաքական պլատֆորմ մշակվի.

1. Սոցիալական բնույթի միջոցների հարմարեցում Հայաստանի Հանրապետության յուրահատուկ պայմաններին, ինչպես՝ միջին խավի շահերի պաշտպանություն, կոնցեսիաների, արդյունաբերության զարգացման և այլնի ճանապարհով երկրի շինարարության գործում արտասահմանյան կապիտալի ներգրավում, մանր առևտրի ազատություն, արտասահմանյան բարեգործական կազմակերպությունների ծառայությունների օգտագործում,

2. Վարչական բնույթի միջոցների համապատասխանեցում.

Ա. Խորհուրդների և ուրիշ ընտրական հաստատությունների ընտրությանը բոլոր աշխատավորների իրական մասնակցության ապահովում՝ նրանց բավարար քաղաքացիա-

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳԻՏ

Գ Գ (Գ) Գրպի, քիվ 1 (37) հունվար-մարտ, 2012

ԿԼԻ Կամահայկական հանդես

կան ազատությունների տրամադրման ճանապարհով,

Բ. Քաղաքական և վարչական կառավարման գործում ռազմական իշխանությունների ենթակայեցում քաղաքացիականին,

3. Ներկա Հայաստանի սահմանների ուղղում նրան բացառապես հայերով բնակեցված տարածքների (Լոռու և Ախալքալաքի գավառների) միավորմամբ:

4. Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության օրինականացում նրա կուսակցական կազմակերպությունների լիակատար ազատության, ժողովների, բանավոր և

գրավոր քարոզչության ու Խորհուրդների և այլ ընտրական հաստատությունների ընտրություններին մասնակցության ազատության իմաստով:

5. Հայաստանի Ժողկոմխորհի վերակառուցում Հայ Յեղափոխական «Գաշնակցություն» կուսակցության հետ դաշինքային հիմունքներով:

ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 194, ք. 5: Մեքենագիր: Բնագրի լուսապատճեն: Թարգմանություն ռուսերենից: